ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԽԱՂԵՐ

Հեղինե Խաչատրյան

EUROPEAN COMMISSION
Humanitarian Aid and Civil Protection
unicef

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԽԱՂԵՐ

Գրքույկը երաշխավորված է գործածության
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

ԵՐԵՎԱՆ 2013

ՀՏԴ
ԳՄԴ

Հեղինակ՝ Հեղինե Խաչատրյան
Խորհուրդատուներ՝ Սիրուշ Հովհաննիսյան, Թերեզա Դիլբարյան
Խմբագիրներ՝ Համլետ Մաթևոսյան, Արա Բարսեղյան, Տիգրան Թովմասյան
Ձևավորողներ՝ Վահագն Սարգսյան, Վահան Ալավերդյան

Խ

Աղետների ռիսկի նվազեցման կրթություն
Ձեռնարկ նախադպրոցական կրթական հաստատությունների և հիմնական դպրոցի մանկավարժների համար

Սույն ձեռնարկը նախատեսված է նախադպրոցական հաստատությունների սաների և հիմնական դպրոցի աշակերտների՝ աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) կրթության կազմակերպման համար: Այն ներառում է ուսումնասիրելու, պատմելու, քննարկելու, համագործակցելու և իրականացնելու տարատեսակ առաջադրանքներով ԱՌՆ պարապմունքներ, ուսումնական խաղեր և շարժախաղեր: Առաջադրանքները կազմված են այնպես, որ երեխաները կարողանան հնարավորինս ինքնուրույն կատարել դրանք:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2013

ԲԱԺԻՆ I

ԱՌՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ 6

Անվտանգ դասասենյակ 7

Ընտանեկան առաջադրանք 9

Անվտանգ բնակարան 9

Երկրաշարժին պատրաստվածության կանոնները 16

Վտանգի ճանաչում 19

Անվտանգության կանոնների պահպանումը համակարգչային կաբինետում 23

Անվտանգության կանոնների պահպանումը քիմիայի կաբինետում 25

Տարհանում հրդեհի ժամանակ 28

Արատակարգ իրավիճակների կանխարգելում, պաշտպանություն, հետևանքների հաղթահարում 31

ԲԱԺԻՆ II

ԱՌՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ 35

Ո՞վ եմ ես 36

Գտի՛ր համապատասխան քարտը 37

Ով ավելի դիպուկ և արագ 38

Շարունակի՛ր ընկերոջդ միտքը 39

Ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ 40

Ամպերն ու կայծակը 41

Ո՞վ ես դու 42

Անձրև և քամի 43

Տեղատարափ 44

Ձրհեղեղ 45

Երկրաշարժ 46

Որոտ, ամպրոպ, կարկուտ 47

Հրդեհի մարում 48

Քարե արձաններ 49

Արտակարգ իրավիճակներ 50
Ցատկ ձորակի վրայով 52
Գրականություն 53
Հրդեհ 54
Երկրաշարժ 54
Սելավ 55
Քամիներ 55
Արտակարգ իրավիճակների կանխարգելում 55
Արտակարգ իրավիճակների պաշտպանություն 56
Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում 57
Հանելուկներ 58
Աղետների ռիսկի նվազեցումն կրթության տարրերով դասերի դիտարկման և վերլուծության թերթիկ 61

ԲԱԺԻՆ I

ԱՌՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Անվտանգ դասասենյակ[1]

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- քննարկի և գնահատի երկրաշարժն ու նրա հետևանքները,
- ներկայացնի և իրականացնի երկրաշարժի վնասակար հետևանքներին դիմակայելու, դրանք նվազեցնելու հնարավոր քայլեր ու գործողություններ,
- նշի վտանգավոր և անվտանգ տեղերը դասասենյակում և հիմնավորի իր կարծիքը:

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է մտածել և համառոտ ներկայացնել երկրաշարժի և նրա հնարավոր հետևանքների մասին իրենց պատկերացումները: Առաջադրանքը կատարելու համար խումբը բաժանվում է զույգերի: Յուրաքանչյուր աշակերտ նախ ինքնուրույն մտածում է հանձնարարված թեմայի շուրջ, ապա իր տեսակետը քննարկում ընկերոջ հետ, լսում նրա տեսակետը: Այնուհետև, զույգերը գալիս են ընդհանուր հայտարարի և իրենց ընդհանուր տեսակետը ներկայացնում դասարանին:

Քննարկման արդյունքում ուսուցիչը օգնում է աշակերտներին եզրակացնել, որ ոչ թե երկրաշարժն է վնասում մարդկանց, այլ դրա արդյունքում քանդվող վատ կառուցված շենքերն ու վայր ընկնող առարկաները, որոնք պատշաճ կերպով ամրացված կամ ապահով դրված չեն: Ուստի, երկրաշարժի ժամանակ, խիստ վանգավոր են այն վայրերը, որտեղ կարող են իրեր (օրինակ՝ ծանր գրապահարաններ, ծաղկամաններ և այլն) ընկնել և ջարդվել՝ պատճառելով տարբեր վնասվածքներ *(15րոպե):*

Իմաստի ընկալում

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին կազմել և ներկայացնել իրենց դասասենյակի անվտանգ և վտանգավոր տեղերի ցանկը երկրաշարժի ժամանակ: Աշակերտներն աշխատում են զույգերով, այնուհետև ծավալվում

1 Տարրական դասարանների աշակերտների հետ աշխատելիս հարկավոր է պարզեցնել պարապմունքների նպատակներն ու դրանցից բխող ուսումնական գործողությունները, դրանք համապատասխանեցնել երեխաների տարիքային առանձնահատկություններին:

է դասարանային քննարկում: Ուսուցիչն ուղղորդում է աշակերտների քննարկումները՝ օգտագործելով համապատասխան ուսումնական նյութը:

Ուսումնական նյութ
Դասասենյակի վտանգների որոնում

Դասասենյակի վտանգների հայտնաբերման նպատակով անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք.

- պահարանները, գրապահարաններն ու դարակներն ամուր և հիմնավոր ամրացված են,
- պահարաններից ու դարակներից հեռացված են ծանր առարկաները,
- համակարգիչը կամ հեռուստացույցը ապահով ամրացված է կամ դրված է արգելակվող անիվներով սեղանի վրա,
- դասասենյակում գտնվող դաշնամուրն այնպես է ամրացված, որ երկրաշարժի ժամանակ չսահի,
- կախովի բույսերի ծաղկամանները թեթև քաշ ունեն, պատրաստված են չջարդվող նյութից, ապահով ամրացված են և գտնվում են աշակերտների աշխատանքային տարածքից հեռու,
- պատուհանագոգերն ազատ են ծանր, կոտրվող ծաղկամաններից կամ այլ առարկաներից,
- լուսավորող սարքերը թեթև են և ապահով ամրացված են առաստաղին կամ պատերին...

Աշակերտներն ուսուցիչի հետ միասին կազմում են դասարանի ամենաանվտանգ և ամենավտանգավոր տեղերի (իրերի) ցանկը՝ լրացնելով ներքոբերյալ աղյուսակը *(15րոպե):*

Վտանգավոր տեղեր (իրեր)		Անվտանգ տեղեր (իրեր)	
1.		1.	
2.		2.	
3.		3.	
4.		4.	
5.		5.	

Կշռադատում

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է քննարկել, թե ինչպիսին պետք է լինի իրենց դասասենյակի կահավորումը, և ինչ փոփոխություններ կարելի է անել, որպեսզի այն դառնա առավել անվտանգ երկրաշարժի ժամանակ:

Այնուհետև, աշակերտներն ուսուցիչի հետ միասին կարող են վերադասավորել դասասենյակը՝ երկրաշարժի դեպքում այն առավել անվտանգ դարձնելու նպատակով, եթե իհարկե կա այդպիսի հնարավորություն *(15րոպե):*

Պարապմունքից հետո ուսուցիչը կարող է կազմակերպել «Երկրաշարժ» շարժախաղը:

Ընտանեկան առաջադրանք
Անվտանգ բնակարան

Պարապմունքի նպատակը

Սովորողը (ընտանիքի անդամների հետ միասին) պետք է.

- գնահատի իրենց բնակարանը կամ տունը՝ երկրաշարժի նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու և հնարավոր բացասական հետևանքներին դիմակայելու տեսանկյունից,
- *քննարկի, նաև քայլեր ձեռնարկի, որոնք նվազագույնի կհասցնեն հնարավոր ռիսկերը երկրաշարժի ժամանակ:*

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին՝ իրենց ընտանիքի անդամների հետ միասին.

- զննել և գրանցել իրենց տան, բնակարանի անվտանգ և վտանգավոր տեղերը,
- բացատրել ու հիմնավորել դրանց ընտրությունը,
- քննարկել, թե արդյոք հնարավոր է վերադասավորել բնակարանը կամ տունն այնպես, որ այն սեյսմիկ վտանգի դեպքում դառնա առավել ապահով և անվտանգ:

Իմաստի ընկալում

Առաջադրանքը կարող է իրականացվել մի քանի փուլերով.

1. Ուսուցիչն աշակերտներին տրամադրում է «*Ընտանիքի՝ աղետներին պատրաստվածության պլան*» ուսումնական նյութը և առաջարկում լրացնել այն ծնողների հետ միասին:
2. Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ընտանիքի անդամների հետ քննարկել և կազմել երկրաշարժի դեպքում հնարավոր վտանգների ցուցակը (ուսումնական նյութ «*Երկրաշարժի ժամանակ հնարավոր վտանգների կանխատեսում*»):
3. Ուսուցիչն ուղղորդում է աշակերտներին[a] իրենց ընտանիքի անդամների հետ միասին լրացնել «*Երկրաշարժ. անվտանգ տուն*» ուսումնական նյութը:

Փուլ առաջին: Ուսուցիչն աշակերտներին տրամադրում է «*Ընտանիքի՝ աղետներին պատրաստվածության պլան*» ուսումնական նյութը և առաջարկում՝ ծնողների հետ միասին լրացնել այն:

Ուսումնական նյութ
Ընտանիքի՝ աղետներին պատրաստվածության պլան

Անուն, ազգանուն _____

Հասցե _____

Լրացման ամսաթիվ _____

- Մենք՝ ընտանիքով, որոշել ենք մեր տան (բնակարանի) և սենյակների ամենաանվտանգ տեղերը: Օրինակ՝ խոհանոցային ամուր սեղանի տակ կամ հիմնական (կրող) պատերով կազմված անկյունները:
- Մենք գիտենք յուրաքանչյուր սենյակի ամենավտանգավոր տեղերը: Դրանք կարող են լինել պատուհանի, գրապահարանների, մեծ հայելիների, խոհանոցային կահույքի, վառարանների կամ բուխարու մոտակայքում:
- Մենք մշակել ենք մեր տան տարհանման պլանը:
- Մենք գիտենք, որ պահուստային ելքերը կօգտագործենք, եթե հարկ լինի լքել տունն արտակարգ իրավիճակների ժամանակ:
- Մենք գիտենք, որ եթե գտնվում ենք բազմահարկ շենքի ստորին հարկերում, ապա երկրաշարժի դեպքում կարող ենք լքել այն, սակայն

պետք է գործել արագ և զգույշ: Աստիճանավանդակից օգտվելիս անհրաժեշտ է ցուցաբերել զննական և զգույշ վերաբերմունք:

- Մենք գիտենք, որ եթե երկրաշարժի ժամանակ գտնվում ենք շենքի բարձր հարկերում և չենք կարող արագ լքել այն, ապա պետք է *հեռանալ պատուհաններից, կանգնել հիմնական պատերի մոտ, հիմնական պատերով կազմված անկյուններում, դռների բացվածքներում, մտնել ամուր կահույքի տակ, ձեռքերով կամ ինչ-որ իրով ծածկել գլուխը, կառչել որևէ ամուր առարկայից՝ մինչև ցնցումների ավարտը:*
- Մենք գիտենք, որ մեր բնակարանի նախամուտքը, շենքի մուտքը, աստիճանավանդակները, միջանցքները պետք է ազատենք մեծածավալ առարկաներից, որպեսզի անհրաժեշտության դեպքում արագ և ազատ դուրս գանք բնակարանից, շենքից:
- Մենք գիտենք այն ծառայությունների հասցեները (արտակարգ իրավիճակներ, ոստիկանություն, շտապ օգնություն և այլն) ու հեռախոսահամարները, որոնց հետ կարող ենք կապվել արտակարգ իրավիճակներում:
- Մենք բոլորս պայմանավորվել ենք երկրաշարժից հետո հանդիպել որևէ անվտանգ վայրում՝ *փողոցում, քաղաքամերձ որևէ վայրում.*_
- Մենք պատճենահանել ենք կարևոր փաստաթղթերը և և պահում ենք առաջին անհրաժեշտության պայուսակում::
- Մենք ամրացրել ենք բարձր և ծանր կահույքը, էլեկտրական, լուսավորող և օդափոխիչ սարքավորումները և այլ իրեր, որոնք ընկնելիս կարող են վնասել մեզ կամ փակել ելքերը:
- Մենք մեկուսացրել ենք տանը պահվող վտանգավոր և դյուրավառ նյութերը՝ ապահովելով դրանց անվտանգությունը:
- Մենք գիտենք, որ երկրաշարժի դեպքում, մինչ բնակարանը լքելն ու անվտանգ վայր գնալը, անհրաժեշտ է անջատել գազի և էլեկտրական սարքավորումները, փակել ջրի ծորակները:
- Մենք գիտենք, որ բնակարանում չպետք է կատարենք շենքի սեյսմակայունությունը նվազեցնող, խաթարող ձևափոխություններ և հիմքը թուլացնող վերակառուցումներ:
- Մենք ընտանիքով քննարկել և որոշել ենք մեր անելիքը երկրաշարժի ժամանակ:

Փուլ երկրորդ: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ընտանիքի անդամների հետ միասին քննարկել և կազմել երկրաշարժի ժամանակ հնարավոր վտանգների ցուցակ. (ուսումնական նյութ՝ «*Երկրաշարժի ժամանակ հնարավոր վտանգների կանխատեսում*»):

Ուսումնական նյութ
Երկրաշարժի ժամանակ հնարավոր վտանգների կանխատեսում

Անուն, ազգանուն _____

Հասցե _____

Լրացման ամսաթիվ _____

Երկրաշարժի ժամանակ հնարավոր վտանգների կանխատեսումը պետք է իրականացնել տանը, բնակարանում՝ ընտանիքի բոլոր անդամների մասնակցությամբ:

Կատարեք որոշակի հետազոտական աշխատանք: Շրջելով սենյակից սենյակ և օգտագործելով ձեր գիտելիքն ու երևակայությունը՝ փորձեք պատկերացնել, թե ինչ կարող է պատահել, եթե երկրաշարժի դեպքում ձեր տունը սկսի ցնցվել: Հարկ է ստուգել և նշել այն իրերը, որոնք ցնցումների ժամանակ կարող են սահել, ընկնել կամ շպրտվել տան կամ բնակարանի այն հատվածները, որտեղ ընտանիքի անդամները ժամանակի առավել մեծ մասն են անցկացնում[a] քնում են, ուտում, աշխատում կամ խաղում:

Հնարավոր վտանգների ցուցակ

1. ----------
2. ----------
3. ----------
4. ----------
5. ----------
6. ----------
7. ----------
8. ----------

Ուսումնական նյութ
Հնարավոր վտանգների նվազեցում

Անուն, ազգանուն _____

Հասցե _____

Լրացման ամսաթիվ _____

- ---
- ---
- ---
- ---
- ---
- ---
- ---
- ---

Հանձնարարությունը կատարելու համար օգտակար կլինեն հետևյալ խորհուրդները.

1. Ամրացնել վտանգավոր իրերը (օրինակ՝ պահարանները կամ այլ իրեր), որոնք ցնցումների դեպքում կարող են ընկնել՝ վնասել մարդկանց կամ խոչընդոտել ելքը:
2. Ամրացնել այն իրերը, որոնց վնասվելը կարող է հանգեցնել զգալի տնտեսական վնասի, օրինակ՝ համակարգիչ, սարքավորումներ:
3. Ամրացնել կամ ապահով տեղադրել կոտրվող իրերը:
4. Տեղադրել ծանր իրերն ընտանիքի ամենակարճահասակ անդամի գլխի մակարդակից ցածր:
5. Կահույքը (ներառյալ խոհանոցային պահարանները) հուսալի ամրացնել պատերին:
6. Համոզվել, որ ջեռուցման, գազամատակարարման, ջրամատակարարման համակարգերը ապահով են և հուսալի ամրացված:
7. Տան պատուհանների, դռների և պահարանների ապակիները դարձնել առավել ապահով, օրինակ՝ կախել երկար վարագույրներ, ապակիներն ամրացնել ու թաղանթապատել:
8. Ամրացնել ծանր և թանկարժեք էլեկտրական սարքերը:

9. Ջահերը հուսալիորեն ամրացնել առաստաղին:
10. Պատերին նկարներ կախելիս օգտագործել փակ ամրակներ:
11. Ստուգել վտանգավոր նյութերի առկայությունը (կենցաղային քիմիական և դյուրավառ նյութեր), համոզվել, որ դրանք պահվում են ապահով տեղում:
12. Անհրաժեշտության դեպքում վերադասավորել խոհանոցային պահարանները, դրանց պարունակությունը, կամ դրանք փոխարինել այնպիսի պահարաններով, որոնք անվտանգ կլինեն երկրաշարժի ժամանակ:

Փուլ երրորդ: Ուսուցիչն ուղղորդում է աշակերտներին՝ իրենց ընտանիքի անդամների հետ միասին լրացնել «*Երկրաշարժ. անվտանգ տուն*» ուսումնական նյութը: Նա առաջարկում է աշակերտներին՝ ընտանիքի անդամների հետ միասին կազմել անհրաժեշտ գործողությունների ցանկը:

Ուսումնական նյութ
Երկրաշարժ. անվտանգ տուն

Անուն, ազգանուն _____

Հասցե _____

Լրացման ամսաթիվ _____

1. Նախապես որոշեք բնակարանի առավել անվտանգ տեղերը՝ հիմնական պատերով կազմված անկյունները, դռների բացվածքները:
2. Մահճակալները, բազմոցներն ու բազկաթոռները տեղադրեք պատուհաններից, կախովի ջահերից, մեծ հայելիներից, ծանր շրջանակներով նկարներից, ծանր իրեր պարունակող դարակներից հեռու՝ հենասյուների մոտ:
3. Համոզվեք, որ կախովի ջահերը, մեծ հայելիները, ծանր շրջանակներով նկարները, օդորակիչները հուսալի ամրացված են:
4. Մահճակալի կողքին գտնվող ծանր լուսամփոփները փոխարինեք թեթև, չջարդվող լուսամփոփներով:
5. Կախովի ծանր, ջարդվող ծաղկամանները փոխարինեք թեթև, չջարդվող ծաղկամաններով:

6. Օգտագործեք փակ ամրակներ կախովի բույսերի, լամպերի և այլնի ամրացման համար:
7. Համոզվեք, որ այդ ամրակներն ամրացված են հավուր պատշաճի:
8. Տեղափոխեք բոլոր ծանր, ջարդվող իրերը, որոնք գտնվում են բարձր դարակների, պահարանների, պատուհանագոգերի վրա:
9. Ջերմության աղբյուրների մոտից հեռացրեք դյուրավառ նյութերը:
10. Հուսալի ամրացրեք ջրատաքացուցիչները: Բնակարանի մուտքի դռներն ազատեք ծանր և մեծածավալ առարկաներից:
11. Կահույքը, պահարանները տեղադրեք դռներից հեռու:
12. Հուսալիորեն ամրացրեք բարձր և ծանր կահույքը, գրապահարանները, անիվներով իրերը, որոնք կարող են գլորվել, շրջվել՝ պատճառելով տարբեր վնասվածքներ:
13. Գազօջախը, գազի վառարանը, ջեռուցման կաթսան և ջրատաքացուցիչը միացրեք գազամատակարարման համակարգին ճկուն միակցիչներով:
14. Ամրացրեք տանիքը, ծխնելույզը, համոզվեք, որ տանիքի թիթեղները կամ կղմինդրներն իրենց տեղերում են և հուսալի ամրացված:
15. Էտեք տանը մոտ գտնվող ծառերի հին կամ վնասված ճյուղերը, որոնք կարող են կոտրվել և ընկնել տան վրա:

Կշռադատում

Յուրաքանչյուր հանձնարարությունը կատարելուց հետո աշակերտները դրանք ներկայացնում ու քննարկում են դասարանում:

Ավարտին ուսուցիչը կարող է աշակերտներին մրցանակներ տալ՝ երեք առաջադրանքներում լավագույնը լինելու և իրենց տանն աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ առնվազն երկու առաջարկ անելու համար:

Երկրաշարժին պատրաստվածության կանոնները

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- *թվարկի և ցուցադրի երկրաշարժին պատրաստ լինելու հիմնական կանոնները,*
- *դրսևորի ճարպկություն և արագաշարժություն:*

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Դասարանը նախապես բաժանվում է 4-5 հոգանոց փոքր խմբերի: Ուսուցիչը խմբերին հանձնարարում է քննարկել և գրել երկրաշարժին պատրաստվածության 5 ամենակարևոր կանոնները:

Խմբերը ներկայացնում և հիմնավորում են իրենց մշակած կանոնները *(15րոպե):*

Իմաստի ընկալում

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին. նախ՝ անհատապես ընթերցել, ապա՝ խմբով քննարկել երկրաշարժերին պատրաստ լինելու հիմնական կանոնների վերաբերյալ ուսումնական նյութը. «Երկրաշարժին պատրաստվածության 5 հիմնական կանոնները» *(10 րոպե):*

Երկրաշարժին պատրաստվածության 5 հիմնական կանոնները

1. Համոզվեք, որ բնակարանի բոլոր վտանգավոր իրերը (ջահեր, պահարաններ, հայելիներ և այլն) ամուր և ապահով ամրացված են:
2. Նախապես գտեք բնակարանի և շրջակա տարածքի անվտանգ տեղերը (ամուր սեղաններ, հիմնական պատերով կազմված անկյուններ, դռների բացվածքներ, շենքերից և կամուրջներից հեռու տարածքներ, բաց տարածություններ և այլն):
3. Նախօրոք պատրաստեք առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ (աղետի ճամպրուկ), որը պետք է պարունակի խմելու ջուր, չփչացող պարենային ապրանքներ, հագուստ, լապտեր, առաջին օգնության արկղիկ, ձեր կարևոր փաստաթղթերի պատճենները, գրիչ, թուղթ և այլն: Մի՛ մոռացեք ձեզ հետ վերցնել ձեր հարազատների, հատուկ ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հեռախոսահամարները:

4. Խուսափեք հնարավոր վտանգավոր տեղերից և առարկաներից (հոսանքի անցման ուղիներ, աստիճանավանդակներ, պատշգամբներ, պատուհաններ, ընկնող իրեր և այլն):
5. Իմացեք, թե ինչպես պաշտպանել ինքներդ ձեզ, եթե գտնվում եք բազմահարկ շենքի բարձր հարկերում (4-րդ և ավելի բարձր): Օրինակ՝ ցնցումների ժամանակ կարելի է արագ մտնել ամուր սեղանի տակ, ծածկել գլուխը և ամուր բռնվել:

Կշռադատում

Խմբերը ուսումնական նյութում նշված երկրաշարժին պատրաստվածության հինգ հիմնական կանոնները համեմատում են իրենց մշակած կանոնների հետ, վերանայում և լրամշակում են դրանք: Կազմակերպվում է դասարանային քննարկում *(15 րոպե):*

Տնային առաջադրանք

Ուսուցիչը խմբերին առաջարկում է պատրաստել հուշաթերթիկներ, նկարներով փոքրիկ գրքույկներ, պաստառներ, որոնք կնպաստեն համայնքի բնակիչների՝ երկրաշարժի հնարավոր հետևանքների և անվտանգության կանոնների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը պետք է ցուցադրեն իրենց աշխատանքը դասարանում, այնուհետև՝ դպրոցի շենքում: Հետագայում նյութը կարող է տարածվել համայնքում:

Պարապմունքից հետո ուսուցիչը կարող է կազմակերպել «***Ծնկի՛ իջեք, ծածկվե՛ք և բռնվե՛ք***» շարժախաղը: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է 5-րդ կանոնի վրա, ցուցադրում այն և աշակերտներին խնդրում կրկնել իր կատարած գործողությունները.



«***Ծնկի՛ իջեք, ծածկվե՛ք, բռնվե՛ք***»

«Երկրաշարժ» հրահանգը լսելուն պես աշակերտները պետք է ծնկի իջնեն, արագ մտնեն սեղանների տակ և ամուր կառչեն որևէ առարկայից *(5 րոպե):*

Ո՞րն է ճիշտ, որը՝ սխալ

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- *թվարկի և գնահատի իր և ընկերների գործողությունները երկրաշարժի ժամանակ,*
- *հիմնավորի ճիշտ և սխալ գործողությունները:*

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Աշակերտներն աշխատում են զույգերով: Ուսուցիչը զույգերին առաջարկում է լրացնել երկրաշարժի ժամանակ ճիշտ և սխալ գործողությունների աղյուսակը *(15 րոպե):*

Ի՞նչ պետք է անել երկրաշարժի ժամանակ		Ի՞նչ չի կարելի անել երկրաշարժի ժամանակ	
1.		1.	
2.		2.	
3.		3.	

Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները ներկայացնում և համեմատում են իրենց արդյունքները:

Իմաստի ընկալում

Կազմակերպվում է դասարանական քննարկում հարց ու պատասխանի տեսքով: Աշակերտների զույգերը հերթով բարձրաձայնում են որևէ գործողություն և խնդրում են մեկ այլ զույգի վերլուծել այդ գործողությունը ճիշտ կամ սխալ լինելու տեսանկյունից: Ուսուցիչն ուղղորդում է քննարկումը:

Օրինակ՝

Հարցեր	Պատասխաններ
Երկրաշարժի դեպքում ինչու՞ է վտանգավոր լինել.	
- պատուհանների և հայելիների մոտ	----------
- ջահի կամ նկարի տակ	----------
- ընկնող իրերի մոտակայքում	----------
- պատշգամբում	----------
- աստիճանավանդակի վրա, վերելակում և այլն:	----------

Կշռադատում

Աշակերտներն ուսուցիչի հետ միասին կազմում են երկրաշարժի ժամանակ երեխաների վարքագծի կանոնները և այն փակցնում դասասենյակում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Վտանգի[2] ճանաչում

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- ճանաչի իր շրջապատում առկա վտանգները և գնահատի դրանք,
- առաջարկի լուծումներ երկրաշարժի հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ,
- դրսևորի դիտունակություն:

2 Վտանգ՝ վտանգավոր երևույթ, նյութ (ռադիոակտիվ, քիմիական), մարդու գործունեության ոլորտ , որը համապատասխան պայմաններում (օրինակ, երկրաշարժի ժամանակ) կարող է հանգեցնել մարդկային և նյութական կորուստների, մարդկանց առողջության վնասի և կենսագործունեության բնականոն պայմանների խախտման (աղետ):

Պարապմունքի ընթացքը

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է որոշել երկրաշարժի դեպքում հնարավոր վտանգները.

- դասասենյակներում և միջանցքներում,
- դպրոցի շենքում,
- դպրոցի շրջակայքում,
- իրենց բնակավայրում (քաղաքում, գյուղում):

Աշակերտներն աշխատում են 4-5 հոգանոց խմբերով: Նրանք, ըստ ցանկության, ընտրում են վերը նշված վայրերից մեկը և փորձում կազմել հնարավոր վտանգների ցանկը:

Առաջադրանքն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

Այն կարող է ունենալ հետևյալ տեսքը.

Մեր (աշակերտների) կողմից հայտնաբերված վտանգները

Դասասենյակներում և միջանցքներում	**Դպրոցի շրջակայքում**
• չամրացված գրապահարանների և կահույքի ընկնելու վտանգ, • պահարանների վրա դրված և պատերից կախված առարկաների ընկնելու վտանգ, • պատուհանների ապակիների կոտրվելու վտանգ, • առաստաղի ծեփամասերի թափվելու վտանգ, • առաստաղին և պատերին վատ ամրացված լուսավորող սարքերի վայր ընկնելու վտանգ, • վթարային վիճակում գտնվող պատերի փլուզման վտանգ…	• տանիքի թուլացած, վատ ամրացված թիթեղների պոկվելու և ցած ընկնելու վտանգ, • պատուհանների ապակիներ, կոտրվելու վտանգ, • պատերի և ծխնելույզի թուլացած աղյուսների, քարերի թափվելու վտանգ, • հրդեհի կամ հոսանքահարման վտանգ, որը կարող է ծագել էլեկտրամալուխների վնասման հետևանքով…

Դպրոցի շենքում	Բնակավայրում
• վթարային պատերի, աստիճանա-վանդակների, առաստաղի փլուզման վտանգ, • հրդեհի վտանգ, որը կարող է ծագել էլեկտրահաղորդալարերի և մալուխ-ների վնասման հատևանքով, • գազի արտահոսքի, հրդեհի կամ պայթյունի վտանգ, որը կարող է ծագել գազամատակարարման համակարգի վնասման հետևանքով, • ջրածածկման վտանգ, որը կարող է ծագել ջրատար խողովակների վնասման հետևանքով…	• երթևեկության խափանման վտանգ՝ կամուրջների փլուզման երկաթուղու, մայրուղու կամ համայնքային նշանակության ճանապարհների վնասման հետևանքով, • հրդեհի կամ պայթյունի վտանգ, որը կարող է ծագել էլեկտրամատակարարման ցանցի, գազատար խողովակների վնասման, հրդեհապայթյունա-վտանգ օբյեկտներում վթարի հետևանքով, • ջրհեղեղի վտանգ, որ կարող է ծագել ջրամբարի պատվարի փլուզման հետևանքով...

Յուրաքանչյուր խմբի ներկայացման ժամանակ ուսուցիչը հանձնարարում է որևէ այլ խմբի ներկայացնել ևս մեկ-երկու առաջարկություն հնարավոր վտանգների վերաբերյալ:

Այնուհետև, ուսուցիչը խմբերին բաժանում է երկրաշարժի ժամանակ վտանգների գնահատման համապատասխան թերթիկներ և առաջարկում զննել ու գնահատել իրենց ընտրած տարածքները:

Խմբերը լրացնում են գնահատման թերթիկները և հաջորդ պարապմունքին ներկայացնում իրենց ուսումնասիրությունների արդյունքները: Այնուհետև, կազմակերպում են քննարկում և առաջարկում՝ նշված վայրերում երկրաշարժի հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների տարբերակներ:

Ընդ որում, խմբերն առաջարկում են հստակ, պարզ, բայց իրատեսական միջոցառումներ, որոնք կարող են իրականացնել ինքնուրույն և միջոցառումներ, որոնք կարող են իրականացնել համայնքները, համապատասխան մասնագիտացված կառույցներն ու կազմակերպությունները:

Առաջին խումբ

Հնարավոր հետևանքների նվազեցման ինքնուրույն միջոցառումներ	Հնարավոր հետևանքների նվազեցման համատեղ միջոցառումներ
1.----------	1.----------
2.----------	2.----------

Երկրորդ խումբ

Հնարավոր հետևանքների նվազեցման ինքնուրույն միջոցառումներ	Հնարավոր հետևանքների նվազեցման համատեղ միջոցառումներ
1.----------	1.----------
2.----------	2.----------

Երրորդ խումբ

Հնարավոր հետևանքների նվազեցման ինքնուրույն միջոցառումներ	Հնարավոր հետևանքների նվազեցման համատեղ միջոցառումներ
1.----------	1.----------
2.----------	2.----------

Չորրորդ խումբ

Հնարավոր հետևանքների նվազեցման ինքնուրույն միջոցառումներ	Հնարավոր հետևանքների նվազեցման համատեղ միջոցառումներ
1.----------	1.----------
2.----------	2.----------

Անվտանգության կանոնների պահպանումը համակարգչային կաբինետում[3]

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- *քննարկի և ձևակերպի համակարգչային կաբինետում աշխատելու անվտանգության կանոնները,*
- *կարողանա օգտվել համակարգչից՝ պահպանելով անվտանգության կանոնները,*

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է մշակել համակարգչային կաբինետում անվտանգ աշխատելու կանոններ: Որպեսզի այդ կանոնները իրապես գործողության մղեն, պահպանվեն աշակերտների կողմից, ուսուցիչն առաջարկում է մշակել դրանք՝ առաջնորդվելով որոշակի սկզբունքներով: Մասնավորապես, այդ կանոնները պետք է.

- *լինեն թելադրող, գործողության մղող և դրականորեն ձևակերպված,*
- *ցույց տան գործողություն,*
- *ձևակերպվեն պարզ և հստակ,*
- *գրված լինեն «մեկ կանոն՝ մեկ գործողություն» սկզբունքով:*

Աշակերտներն աշխատում են զույգերով: Նրանք քննարկում և կազմում են համակարգչային կաբինետում անվտանգ աշխատելու առնվազն երեք կանոն, դրանք ներկայացնում դասարանին *(15րոպե)*:

Իմաստի ընկալում

Կազմակերպվում է դասարանային քննարկում: Յուրաքանչյուր զույգ ներկայացնում և հիմնավորում է իր առաջարկած տարբերակը: Ուսուցիչը ևս իր տարբերակներն է ներկայացնում և հիմնավորում:

Արդյունքում աշակերտներն ուսուցչի օգնությամբ կազմում են համակարգչային կաբինետում աշխատելու անվտանգության կանոնների ցանկ: Աշխատանքի արդյունքները գրանցում են գրատախտակին *(15րոպե)*:

Այդ ցանկում կարող են ընդգրկվել հետևյալ կանոնները.

3 Նմանատիպ մեկնարկային պարապմունքներ կարելի է կազմակերպել նաև ֆիզիկայի, նախնական զինվորական պատրաստվածության, տեխնոլոգիայի և այլ առարկաների կաբինետներում՝կախված նրանից, թե որ դասարանում են երեխաներն ուսումնասիրում այդ առարկաները:

Եղի՛ր ուշադիր և կարգապահ:

Ազատի՛ր համակարգչային սեղանը ավելորդ իրերից:

Միացրո՛ւ կամ անջատի՛ր համակարգիչն ուսուցչի գիտությամբ:

Հնարավորինս հեռո՛ւ մնա հոսանքի լարերից, վարդակներից:

Մի՛ դիպիր մոնիտորի էկրանին:

Համակարգչի ստեղնաշարով աշխատի՛ր չոր և մաքուր ձեռքերով:

Հանգիստ նստի՛ր համակարգչի առջև, խուսափի՛ր կտրուկ շարժումներ անելուց:

Համակարգչով աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրները լուծի՛ր ուսուցչի հետ:

Կշռադատում

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին համակարգիչների վրա հավաքել համակարգչային կաբինետում աշխատելու անվտանգության կանոնները՝ միաժամանակ պահպանելով դրանք: Աշակերտները յուրաքանչյուր կանոնին համապատասխան նկարներ, խորհրդանշաններ են ընտրում, դրանցով իսկ կանոնները դարձնելով առավել հետաքրքիր, խոսուն և ընկալելի *(15րոպե)*:

Աշխատանքը կարող է շարունակվել տանը: Առավել հետաքրքիր և աշակերտների մեծամասնության հավանությանն արժանացած աշխատանքը փակցվում է համակարգչային կաբինետում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Որպեսզի այդ կանոններն ամրակայվեն աշակերտների վարքագծում, անհրաժեշտ է հետագա պարապմունքների ժամանակ նրանց համակարգչային

հմտությունների գնահատման սանդղակում պարտադիր ներառել անվտանգության կանոնները պահպանելու մասին կետ:

Անվտանգության կանոնների պահպանումը քիմիայի կաբինետում

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- քննարկի և ձևակերպի քիմիայի կաբինետում աշխատելու անվտանգության կանոնները,
- կարողանա օգտվել քիմիական սարքերից՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ուշադիր դիտել քիմիայի կաբինետը, զննել այնտեղ գտնվող սարքերը և մշակել քիմիայի կաբինետում անվտանգ գործելու, քիմիական սարքերից օգտվելու կանոններ: Ընդ որում, աշակերտները կարող են մշակել ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ սարքին և գործողությանը վերաբերող անվտանգության կանոններ:

Որպեսզի այդ կանոնները իրականում գործողության մղեն, պահպանվեն աշակերտների կողմից, ուսուցիչն առաջարկում է դրանք մշակելիս առաջնորդվել որոշակի սկզբունքներով:

Մասնավորապես, այդ կանոնները պետք է.

- *լինեն թելադրող,*
- *ցույց տան գործողություն,*
- *ձևակերպված լինեն պարզ և հստակ,*
- *գրված լինեն «մեկ կանոն՝ մեկ գործողություն» սկզբունքով:*

Աշակերտներն աշխատում են զույգերով, քննարկում ու կազմում են քիմիայի կաբինետում անվտանգ գործելու և քիմիական սարքերից օգտվելու առնվազն երեք կանոն, դրանք ներկայացնում դասարանին: Յուրաքանչյուր զույգ

ներկայացնում և հիմնավորում է իր առաջարկած տարբերակը: Կանոնները գրանցվում են *(10-15րոպե)*:

Իմաստի ընկալում

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է անհատապես ընթերցել քիմիայի կաբինետում անվտանգ գործելու, քիմիական սարքերից օգտվելու վերաբերյալ դասագրքի նյութը և նշումներ կատարել: Այնուհետև, աշակերտները վերանայում են իրենց առաջարկած կանոնները, համեմատում ուսումնական նյութի հետ և անհրաժշտության դեպքում հստակեցնում, ճշգրտում, վերաձևակերպում ու համալրում են դրանք *(20րոպե)*:

Կշռադատում

Աշակերտներն ուսուցչի օգնությամբ վերջնական տեսքի են բերում դասի սկզբում իրենց կազմած անվտանգության կանոնների ցանկը: Արդյունքում ստեղծվում է քիմիայի կաբինետում անվտանգ գործելու, քիմիական սարքերից օգտվելու կանոնների ցանկ: Կանոնները կազմելուց հետո աշակերտները այն համեմատում են ներքոբերյալ ցանկի հետ: Այնուհետև, նրանք ավելացնում են այն կանոնները, որոնք բացակայում են իրենց անվտանգության կանոնների ցանկում:

1. քիմիական փորձերը կատարիր ուսուցչի օգնությամբ և անմիջական հսկողությամբ,

2. աշխատանքդ, փորձդ սկսիր միայն այն ժամանակ, երբ հստակ հասկացել ես առաջադրանքը, պահանջը,

3. քիմիական սարքերն ու նյութերը վերցրու այն դեպքում, երբ հստակ գիտես անելիքդ,

4. օգտվիր մաքուր փորձանոթից և քիմիական այլ սարքերից,

5. զգուշորեն օգտվիր քիմիական նյութերից, հիշիր, դրանց 3/4-ը թունավոր են և վտանգավոր,

6. քիմիական նյութի հոտը որոշելու համար փորձանոթը պահիր որոշակի հեռավորության վրա և ձեռքի ափի թեթև շարժումով ուղղորդիր օդի հոսքը անոթից դեպի քեզ,

7. հեղուկ նյութերը խառնելու համար փորձանոթը զգուշությամբ շարժիր հորիզոնական հարթության մեջ,

8. քիմիական նյութի հետ աշխատիր քարշիչ պահարանում,

9. տաքացման համար օգտագործիր սպիրտայրոց,

10. սպիրտայրոցը վառիր լուցկու հատիկով կամ մարխով,

11. սպիրտայրոցը հանգցրու հատուկ թասակով,

12. փորձերից հետո մնացորդները լցրու հատուկ տարայի մեջ և հորիր դպրոցի շենքից հեռու՝ հատուկ նախատեսված տեղում, ուսուցչի գիտությամբ և մասնակցությամբ,

13. հրդեհի դեպքում օգտագործիր կրակմարիչ, ավազ կամ ծածկոց …

Կշռադատում

Ուսուցիչն աշակերտների ընտրությամբ ցուցադրում է անվտանգ գործելու, քիմիական այս կամ այն սարքից անվտանգ օգտվելու եղանակը, գործողությունների հաջորդականությունը: Աշակերտներն, ըստ ցանկության, սակայն ուսուցչի անմիջական հսկողությամբ, ևս կարող են ցուցադրել կաբինետում անվտանգ գործելու, սարքերից անվտանգ օգտվելու գործողություններ: Մյուս աշակերտներն էլ փորձում են գնահատել իրենց ընկերների գործողությունները *(15րոպե)*:

Որպեսզի այդ կանոններն ամրակայվեն աշակերտների վարքագծում,հարկավոր է պարբերաբար անդրադառնալ այդ կանոններին:

- Քիմիայի կաբինետում գործելու, քիմիական սարքերից օգտվելու անվտանգության կանոնները փակցնել կաբինետում՝ տեսանելի տեղերում, պահարանների, սարքերի մոտ:
- Յուրաքանչյուր պատեհ առիթով աշակերտների ուշադրությունը հրավիրել անվտանգության կանոնների վրա (մինչ առաջադրանքը կատարելը, ընթացքում, ավարտելուց հետո):
- Հանձնարարել քիմիայի կաբինետում գործելու և սարքերից օգտվելու անվտանգության կանոնների վերաբերյալ տարբեր առաջադրանքներ՝ ուսումնական նյութերի ընթերցում և քննարկում, տեսաֆիլմերի դիտում և մտքերի փոխանակում, բանավեճեր, տարբեր կաբինետներում գործող կանոնների համեմատում, աքրոստիկոսների, հնգյակների կազմում և այլն:
- Ընդգրկել անվտանգության կանոնները պահպանելու մասին պարտադիր պահանջ գնահատման սանդղակներում:

Տարհանում հրդեհի ժամանակ[4]

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- *քննարկի և գնահատի իր և շրջապատողների գործողությունները տարհանման միջոցառումների ժամանակ,*
- *կողմնորոշվի և գործի արագ, ինչպես նաև օգնի մյուսներին տարհանման ժամանակ:*

Պարապմունքի ընթացքը

Խթանում

Սովորողներն աշխատում են խմբերով: Ուսուցիչը սովորողներին առաջարկում է որոշակի դերեր՝ դպրոցի տնօրեն, զինղեկ, ԱՌՆ թիմ, ուսուցիչ, աշակերտ, տնտեսվար, պահակ, հաշմանդամություն ունեցող անձ:

Խմբերը ձևավորվում են ըստ մասնակիցների ընտրած դերերի:

Ուսուցիչը խմբերին առաջարկում է քննարկել և ներկայացնել այն գործողությունները, որոնք պետք է իրականացնի իրենց ընտրած դերի կրողը տարհանման ժամանակ:

Խմբերը ներկայացնում են իրենց տեսակետները: Ուսուցիչը գրանցում է յուրաքանչյուրի գործողությունները՝ ստանալով դերերին համապատասխան գործողությունների ցանկ *(15րոպե)*:

Իմաստի ընկալում

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է կարդալ տարհանման վերաբերյալ ուսումնական նյութը. «Դպրոցում իրականացվող գործողություններն արտակարգ իրավիճակներում», ընդգծել այն մտքերը, որոնք առնչվում են իրենց գործողություններին, ապա խմբերով քննարկել այն: Խմբերը համեմատում են ուսումնական նյութը և իրենց նախնական տեսակետները, անհրաժեշտության դեպքում վերանայում են դրանք՝ ճշգրտումներ և ավելացումներ անելով իրենց դերին համապատասխան գործողությունների ցանկում *(15րոպե)*:

4 Նույն տրամաբանությամբ կարելի է կազմակերպել նաև այլ արտակարգ իրավիճակներում տարհանման պարապմունքներ:

Կշռադատում

Խմբերը ներկայացնում են իրենց դերերն ու գործողությունները, գնահատում դրանք, անդրադառնում և ճշգրտում իրենց առաջարկած գործողությունների նախնական ցանկը, առաջարկում են նաև նոր դերեր և դրանց համապատասխան գործողություններ *(15 րոպե)*:

Պարապմունքը ենթադրում է պարտադիր շարունակություն, քննարկված հարցերի և ներկայացված գործողությունների հստակ իրականացում՝ դպրոցում կազմակերպվող տարհանման վարժանքի տեսքով:

Վարժանքն ավարտելուց հետո սովորողները ամփոփում են արդյունքները, գնահատում իրենց գիտելիքները, վերլուծում իրենց և մյուսների գործողություններն ու վարքագիծը տարհանման ժամանակ՝ ըստ կողմնորոշման և հրահանգների կատարման արագության, հնարամտության, հույզերի դրսևորման, ուրիշներին օգնելու և այլ տեսանկյուններից:

Ուսումնական նյութ

Դպրոցում իրականացվող գործողություններն արտակարգ իրավիճակներում

(Հրդեհ)

h/h	Գործողություն-ները	Գործողությունների կարգը և հերթականությունը	Կատարողի պաշտոնը, ԱԱՀ
1	2	3	4
1.	Հրդեհի մասին տեղեկատվության հաղորդում	Դպրոցում բռնկված հրդեհի մասին բարձրաձայնում և անձնակազմին տեղեկացնում է այն անձը (անձնակազմի անդամը կամ աշակերտը), ով առաջինն է հայտնաբերել այն: Հրդեհի մասին տեղեկությունը հասցվում է տնօրենին (բացակայության դեպքում՝ փոխտնօրենին):	Դպրոցի անձնակազմի անդամներ (հարկի հերթապահ), աշակերտներ
2.	Ազդարարում	Դպրոցի տնօրենը, ճշտելով հրդեհի մասին տեղեկատվության հավաստիությունը, որոշում է ընդունում անձնակազմի և աշակերտների տարհանման մասին: Ազդարարումն իրականացվում է դպրոցում գործող ազդարարման համակարգի (ձայնային, տեսողական, տեքստային հաղորդում) կամ դպրոցի զանգի հատուկ ազդանշան միջոցով: Տնօրենը հանձնարարականներ է տալիս զինղեկին և անձնակազմի մյուս անդամներին՝ դպրոցի արագ և անվտանգ տարհանում կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ:	Տնօրեն, զինղեկ, անձնակազմի անդամներ
3.	Ահազանգում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Փրկարար ծառայություն և ճգնաժամային կառավարման կենտրոն	Տնօրենը կամ տնօրենի հրամանով որևէ մեկը (զինղեկը, տնտեսվարը, պահակը) ստեղծված իրավիճակի մասին հայտնում է ՀՀ ԱԻՆ տարածքային փրկարար ծառայություն կամ ճգնաժամային կառավարման կենտրոն (հեռ. 911):	Տնօրեն, զինղեկ, անձնակազմի անդամներ

4.	Տարհանման ելքերի դռների բացում	Տարհանման մասին ազդարարումից անմիջապես հետո դպրոցի պահակը (տնտեսվարը) բացում է դպրոցի տարհանման հիմնական և պահուստային ելքերի, սպորտային և հանդիսությունների դահլիճների, բուֆետի կամ ճաշարանի պահուստային դռների փականները, հոսանքազրկում է դպրոցը:	Պահակ, տնտեսվար

Արատակարգ իրավիճակների կանխարգելում, պաշտպանություն, հետևանքների հաղթահարում

Տարբերակ 1.

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- *թվարկի և մեկնաբանի արտակարգ իրավիճակում (ԱԻ) ձեռնարկվող գործողություններն ու միջոցառումները,*
- *քննարկի և գնահատի այդ գործողություններն ու միջոցառումները:*

Պարապմունքի ընթացքը

Սովորողները աշխատում են խմբերով: Նրանք բաժանվում են երեք խմբի:

Ուսուցիչը խմբերին տրամադրում է մեկական A1 չափսի թուղթ և մեծ քանակությամբ փոքրիկ թերթիկներ, որոնց վրա գրված են ԱՌՆ կրթության ամենատարբեր ոլորտներին, խնդիրներին այս կամ այն կերպ առնչվող ուղերձներ՝ *ասույթներ, դարձվածքներ, ասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ* և այլն *(տե՛ս հավելված 1):*

Խմբերը պետք է.

- այդ ուղերձներից ընտրեն նրանք, որոնք վերաբերում են.

1. արտակարգ իրավիճակների կանխարգելմանը,

2. արտակարգ իրավիճակների ժամանակ պաշտպանությանը,

3. արտակարգ իրավիճակների հետևանքների հաղթահարմանը,

- իրենք ձևակերպեն և գրեն մեկական ուղերձ (միտք, պնդում, կարգախոս)՝ ուղղված.

1. արտակարգ իրավիճակների կանխարգելմանը,

2. արտակարգ իրավիճակների ժամանակ պաշտպանությանը,

3. արտակարգ իրավիճակների հետևանքների հաղթահարմանը:

- այնուհետև, խմբավորեն ասույթները և փակցնեն A1 չափսի թղթի վրա գծված աղյուսակի համապատասխան սյունակում:

Արտակարգ իրավիճակների կանխարգելում	Արտակարգ իրավիճակների ժամանակ պաշտպանություն	Արտակարգ իրավիճակների հետևանքների հաղթահարում
1. 2. 3.		

Այնուհետև, պատրաստված աղյուսակները փակցվում են դասասենյակի պատերին: Աշակերտները ծանոթանում են մյուս խմբերի աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում կատարում վերադասավորումներ, ուղղումներ:

Ապա կազմակերպվում է դասարանական քննարկում: Ուսուցչի հանձնարարությամբ խմբերը յուրաքանչյուր սյունակից ընտրում են իրենց պատկերացմամբ ամենադիպուկ ձևակերպումները, ներկայացնում և հիմնավորում դրանք:

Տարբերակ 2.

Նույն պարապմունքը կարելի է կազմակերպել՝ փոխելով առաջադրանքը:

Պարապմունքի ընթացքը

Խմբերից յուրաքանչյուրն աշխատում է արտակարգ իրավիճակներին առնչվող գործողությունների և միջոցառումների որևէ ոլորտի (կանխարգելում, պաշտպանություն, հետևանքների հաղթահարում) ուղերձների (ասույթներ, դարձվածքներ, ասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ և այլն) ընտրության և դրան համապատասխան մեկ մտքի, կարգախոսի ձևակերպման շուրջ: Ընտրելուց և ձևակերպելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց

առանձնացրած գործողությունների, միջոցառումների նշանակությունը, կարևորությունը հետևյալ կաղապարով.
եթե _____,
ապա_____

Լուռ համագործակցություն

Պարապմունքի նպատակը

Սովորողը պետք է.

- *ամրապնդի իր գիտելիքներն ու պատկերացումները ԱՈՆ կրթության վերաբերյալ,*
- *զարգացնի ընկերների հետ աշխատելու և համագործակցելու հմտություններ,*
- *դրսևորի մտքի ճկունություն և կենտրոնացում, իրավիճակին արագ արձագանքելու կարողություն:*

Պարապմունքի ընթացքը

Յուրաքանչյուր խմբին տրվում է 4 ծրար: Ծրարները պարունակում են կտրտված թերթիկներ, որոնց վրա գրված են 4 ասույթի, ասացվածքի և այլն, բառեր ու բառակապակցություններ: Ընդ որում թերթիկները դրված են խառը և պատահականության սկզբունքով: Խմբի անդամներից յուրաքանչյուրը պետք է կառուցի նախադասություն, ամբողջացնի մեկ ասույթ կամ ասացվածք: Հիշեցնենք, որ այդ նախադասության որոշ բառերով, արտահայտություններով թերթիկները գտնվումեևիր խմբի մյուս անդամների ծրարներում: Առաջադրանքը կատարելու համար խմբի յուրաքանչյուր անդամ պետք է օգնի ընկերներին՝ կառուցելու իրենց նախադասությունները՝ տալով իր ծրարում գտնվող համապատասխան բառերով ու բառակապակցություններով թերթիկները:

Հաղթումէայն խումբը, որի անդամները մյուսներից արագ ու ճիշտ են կատարում առաջադրանքը և սեղանին հավաքում բոլոր 4 նախադասությունը:

Հարկավոր է պահպանել հետևյալ կանոնները.

1. Խմբի անդամները անհրաժեշտ բառերով թերթիկները լուռ փոխանցում են միմյանց:
2. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի տալու, բայց ոչ վերցնելու անհրաժեշտ բառով կամ արտահայտությամբ թերթիկը:

ԲԱԺԻՆ II

ԱՌՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Երեք ճիշտ և մեկ սխալ

Խաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *նկարագրի բնական երևույթները, մեկնաբանի արտակարգ իրավիճակները,*
- *դրսևորի մտքի ճկունություն և ուշադրության կենտրոնացում:*

Խաղի ընթացքը

Մասնակիցներից յուրաքանչյուրը թղթի վրա գրում է բնության որևէ երևույթի, աղետի, արտակարգ իրավիճակի անվանում և այն բնութագրող չորս հատկանիշ: Ընդ որում, հատկանիշներից մեկը պետք է լինի սխալ. այսինքն՝ չհամապատասխանի անվանմանը: Այնուհետև երեխաները իրենց ցանկությամբ ընտրում են գործընկեր: Ձևավորված զույգերը միմյանց ներկայացնում են իրենց ձևակերպումները և փորձում գուշակել ճիշտ ու սխալ մտքերը:

Ո՞վ եմ ես

Խաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *նկարագրի, բնութագրի ԱՌՆ ոլորտի մի շարք հասկացություններ,*
- *ձևակերպի դիպուկ հարցեր,*
- *դրսևորի մտքի ճկունություն և ուշադրության կենտրոնացում:*

Խաղի ընթացքը

Ուսուցիչը յուրաքանչյուր մասնակցի թիկունքին ամրացնում է թերթիկ, որի վրա գրված է ԱՌՆ ոլորտին առնչվող որևէ հասկացություն.

- բնության երևույթ,
- ԱՌՆ ոլորտի մասնագետ, մասնագիտություն,
- ԱՌՆ գործիք, սարքավորում, մեխանիզմ,
- արտակարգ իրավիճակներում իրականացվող գործողություն և այլն: [5]

Ուսուցչի հրահանգով մասնակիցները սկսում են իրենց թիկունքին գրված հասկացության վերաբերյալ հարցեր տալ միմյանց՝ ակնկալելով միայն «այո»

5 Տարրական դասարանների երեխաների համար այս խաղը կազմակերպելիս հարկավոր է ընտրել համեմատաբար հեշտ կռահելի և ցուցադրելի հասկացություններ:

կամ «ոչ» պատասխան: Խաղն ավարտվում է այն ժամանակ, երբ բոլոր մասնակիցները կռահում են, թե ինչ է գրված իրենց թիկունքին

Խաղի կանոններ

1. Մասնակիցները չպետք է կարդան իրենց թիկունքին ամրացված թերթիկի վրա գրվածը:
2. Մասնակիցները հարցերին պետք է պատասխանեն միայն այո կամ ոչ:

Գտի՛ր համապատասխան քարտը

Խաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ամրապնդի իր պատկերացումները ԱՌՆ կրթության վերաբերյալ,*
- *գնահատի և արժևորի ԱՌՆ կրթությունը,*
- *դրսևորի մտքի ճկունություն և արագություն, ուշադրության կենտրոնացում:*

Խաղի ընթացքը

Մասնակիցների համար ուսուցիչը պատրաստում է ԱՌՆ կրթությանն առնչվող արտահայտություններով (ձևակերպումներ, ասույթներ, դարձվածքներ, ասացվածքներ և այլն) քարտեր կամ թեթիկներ: Ընդ որում, արտահայտություններից յուրաքանչյուրի սկիզբը գրում է մի քարտի կամ թերթիկի վրա, շարունակությունը՝ մեկ այլ: Այնուհետև քարտերը կամ թերթիկները խառնում և տեղավորում է արկղի (գլխարկի) մեջ: Մասնակիցներից յուրաքանչյուրն ընտրում է մեկ քարտ կամ թերթիկ և փորձում է գտնել այն մասնակցին, որի մոտ է գտնվում իր քարտի կամ թերթիկի վրա գրված արտահայտության շարունակությունը:

Օրինակներ.

- Գյուղ կանգնի, ---------- գերան կկոտրի:
- Տունն ավերելը ավելի հեշտ է,---------- քան կառուցելը:
- Փորձության ---------- ենթարկվածն է զգուշանում:
- Անձրևը գալիս է ---------- քամու կանչով:
- Փոքր առվակները հոսում են նույն զառիվայրով ------- ինչ որ մեծ գետերը:
- Ձուրն իր ճամփան ---------- կգտնի:
- Քամու խերն էլ շատ է, ---------- շառն էլ:
- Չիմանալը մեծ վտանգ է,---------- ինքը տեղով հենց փորձանք է:

Բարձր դասարաններում ուսուցիչը կարող է բարդացնել խաղը՝ գրելով շարունակության ընտրությամբ, շփոթեցնող, նմանատիպ շարունակություն ունեցող, նույն իմաստն ու գաղափարն արտահայտող, մտքի ամբողջացման տեսակետից առավել նուրբ արտահայտություններ:

Խաղի կանոնները

Քարտերի կամ թղթերի թիվը պետք է համապատասխանի մասնակիցների թվին:

Ով ավելի դիպուկ և արագ

Խաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ամրապնդի ԱՌՆ կրթության վերաբերյալ իր պատկերացումները,*
- *գնահատի և արժևորի ԱՌՆ կրթությունը,*
- *դրսևորի մտքի ճկունություն և արագություն, ուշադրության կենտրոնացում:*

Խաղի ընթացքը

Սովորողները մրցում են շարքերով: Խաղավարը՝ ուսուցիչը, ասում է որևէ բառ-հասկացություն և մատնացույց է անում այն շարքը, որտեղից պետք է ինչի այդ բառին համապատասխան միտք: Ընդ որում, ուսուցչի արտաբերած բառ-հասկացությունները պետք է առնչվեն ԱՌՆ կրթության այս կամ այն ոլորտին (արտակարգ իրավիճակներ, աղետներ, ձեռնարկվող միջոցառումներ, գործողություններ և այլն): Շարքերը պետք է հնարավորինս արագ ասեն հասկացություններին համապատասխան ասույթներ, դիպուկ ձևակերպումներ, դարձվածքներ, ասացվածքներ: Եթե տվյալ շարքի սովորողները չեն կարողանում պատասխանել կամ դանդաղում են, ապա պատասխանը կարելի է ակնկալել մյուս շարքերից: Յուրաքանչյուր անհաջողության դեպքում շարքից մեկ մասնակից դուրս է մնում խաղից և զրկվում է հաջորդ հարցերին պատասխանելու հնարավորությունից: Հաղթում է այն շարքը, որտեղ խաղի ավարտին մնում են ավելի մեծ թվով մասնակիցներ:

Խաղի կանոնները

1. Շարքերին տրվում են խաղին մասնակցելու հավասար հնարավորություններ:

2. Երբ պատասխանում են մատնանշված շարքի սովորողները, մյուսները պահպանում են լռություն:
3. Խաղավարի կողմից հնչեցված բառ-հասկացությունները չպետք է կրկնվեն:
4. Մտածելու համար տրվում է հստակ ժամանակ:

Շարունակի՛ր ընկերոջդ միտքը

Խաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ամրապնդի ԱՌՆ կրթության վերաբերյալ իր պատկերացումները,*
- *դրսևորի մտքի ճկունություն և ուշադրության կենտրոնացում, իրավիճակին արագ արձագանքելու կարողություն:*

Խաղի ընթացքը

Ուսուցիչը կամ սովորողներից մեկը բարձրաձայնում է ԱՌՆ կրթության վերաբերյալ որևէ միտք: Դա կարող է լինել ասույթ, դարձվածք, ասացվածք, թևավոր խոսք, հանելուկ, շուտասելուկ և այլն: Շարունակելու նախապատվությունը տրվում է այն սովորողին, ով առաջինն է արձագանքում՝ արագ ոտքի կանգնելով: Հաջորդ արագ արձագանքողն արդեն շարունակում է երկրորդի արտաբերած միտքը, և այդպես, շղթայական ռեակցիայով խաղը ծավալվում է:

Ընդ որում, ընկերոջ միտքը շարունակելու համար կարող են գործել **որոշակի տարբերակներ.**

1. խաղացողը կարող է շարունակել նախորդ խաղացողի միտքը, ներկայացնելով ասույթի իմաստին, հիմնական գաղափարին մոտ ասույթ, միտք:
2. խաղացողը կարող է ներկայացնել ասույթ՝ օգտագործելով նախորդ խաղացողի արտաբերած մտքի, նախադասության «բանալի» բառը՝ հիմնական, կարևոր հասկացությունը:
3. խաղացողը կարող է ներկայացնել ասույթ՝ օգտագործելով նախորդ խաղացողի արտաբերած մտքի, նախադասության որևէ բառը կամ հենց վերջին բառը:

Խաղի ընթացքում, խաղավարի հրահանգով, այդ տարբերակները կարող են հերթափոխել միմյանց, և խաղը կշարունակվի նշված տարբերակին համապատասխան:

Ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ[6]

Մնջախաղի նպատակը

Սովորող պետք է.

- *տարբերակի, զանազանի հրդեհի դեպքում ճիշտ և սխալ գործողությունները,*
- *դրսևորի ուշադրության կենտրոնացում և արագ արձագանքելու ունակություն:*

Մնջախաղի ընթացքը

Ուսուցիչն ասում է կրակի հետ վարվելու կանոններ, գործողություններ: Երեխաները փորձում են կռահել՝ որն է ճիշտ, որը՝ սխալ: Ճիշտ գործողության, կանոնի դեպքում երեխաները ծափահարում են (հավանություն են տալիս), սխալ գործողության դեպքում՝ զարմանում:

Ընդ որում, խաղի ընթացքում երեխաները ևս կարող են ասել ճիշտ և սխալ կանոններ:

Օրինակներ.

Հավանություն	Զարմանք
Հրդեհի դեպքում պետք է. • արագ դուրս վազել, • լքել հրդեհի վայրը, • շտապ ահազանգել **911:**	Հրդեհի դեպքում պետք է հանգիստ նստել:
• Կրակը հանգցնում ենք հողով: • Կրակի վրա ջուր ենք լցնում: • Կրակի վրա թաց ծածկոց ենք գցում:	Կրակը հանգցնում ենք փչելով:

6 Նախադպրոցականների հետ այս խաղերը կազմակերպելիս անհրաժեշտ է նվազեցնել հրահանգներն ու քայլերը, հեշտացնել կանոնները:

Հրդեհի դեպքում պետք է փակել պատուհանները…:	Հրդեհի դեպքում պետք է արագ բացել պատուհանները:

Ամպերն ու կայծակը

Մնջախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ցուցաբերի դիտունակություն բնության երևույթների նկատմամբ,*
- *ներկայացնի ջրի շրջապտույտը,*
- *կատարի համաձայնեցված գործողություններ:*

Մնջախաղի ընթացքը

Դահլիճում կամ հրապարակում նախօրոք գծվում է երկու զուգահեռ, ուղիղ գիծ:

Մնջախաղի մասնակիցները դեմ դիմաց կանգնում են այդ գծերին, կազմելով երկու շարք, ապա բոլորը կքանստում են՝ հանդես գալով *ջրի դերում*:

Հնչում է երաժշտություն (*երեխաներն իրենց բոլոր շարժումները կատարում են փոփոխվող երաժշտության ներքո):*

- Երեխաները դանդաղ ոտքի են կանգնում, ձեռքերը բարձրացնում վեր (*ջրերն արեգակի ճառագայթներից գոլորշիանում, բարձրանում են երկինք՝ վերածվելով ամպերի),*
- Շարքերը մոտենում են իրար և երեխաներից յուրաքանչյուրը ձեռքերի ափերով հարվածում է իր դիմաց կանգնած մասնակցի ձեռքերի ափերին (*սկսվում է կայծակ ու որոտ),*
- Մասնակիցները մատներով ճտճտացնում են՝ (*սկսվում է անձրև)*
- Մասնակիցները ձեռքերի ափերով հարվածում են իրենց ազդրերին (*անձրևը լցվում է առվակներն ու գետակները):*
- Բոլորը միասին վազում և դուրս են գալիս նախանշված գծերից (*դառնում են սելավ ու հոսում):*

Մնջախաղի կանոնները

1. Երեխաներն ամեն անգամ փոխում են իրենց շարժումները, երբ փոխվում է երաժշտությունը (յուրաքանչյուր երաժշտություն խորհրդանշում է բնության որոշակի երևույթ):
2. Մասնակիցները պետք է գտնվեն նախանշված տարածքում:

Ո՞վ ես դու

Մնջախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *բնութագրի ԱՌՆ ոլորտում աշխատող մասնագետներին և ցուցադրի նրանց բնորոշ գործողությունները,*
- *դրսևորի արագաշարժություն, ճկուն ու ստեղծագործ միտք,*
- *լինի համբերատար:*

Մնջախաղի ընթացքը

Խաղի մասնակիցներից մեկը դասասենյակից դուրս է գալիս: Այդ ընթացքում մյուս մասնակիցները ընտրում են ԱՌՆ ոլորտին առնչվող որևէ մասնագետ (հրշեջ, բժիշկ, փրկարար, զինվոր, լրագրող և այլն), որոշում նրան բնութագրող շարժումներ: Այնուհետև դրսում գտնվող մասնակցին ներս են հրավիրում: Ցուցադրող(ներ)ը լուռ, միայն շարժումներով ցուցադրում են ընտրված մասնագետին, նրա զբաղմունքը, դերը, իսկ մասնակիցը պետք է կռահի, թե ում են ցուցադրում: Նույնը կրկնում են մյուս մասնակիցների համար:

Մնջախաղի կանոնները

- Ամեն անգամ ցուցադրվում է մեկ մասնագետ, մեկ դեր:
- Խաղն ընթանում է լուռ:

Անձրև և քամի

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ցուցադրի բնության երևույթներին համարժեք գործողություններ,*
- *դրսևորի քամուց պաշտպանվելու տարրական գիտելիքներ,*
- *դրսևորի արագաշարժություն և ուշադրության կենտրոնացում,*
- *կատարի համաձայնեցված գործողություններ:*

Շարժախաղի ընթացքը

Երեխաներն ուսուցչի հրահանգով կանգնում են կիսաշրջանաձև: Ուսուցիչը՝ խաղավարը, կանգնում է նրանց դիմաց: Նա մասնակիցներին ներկայացնում է խաղի բովանդակությունն ու կանոնները. նա պայմանավորվում է երեխաների հետ, որ երբ կտրվի «*արև*» հրահանգը, բոլորը պետք է միաժամանակ բարձրանան ոտնաթաթերին և ձեռքերը բարձրացնեն վեր՝ *դեպի երկինք, դեպի արևը,* իսկ երբ կտրվի «*քամի*» հրահանգը, բոլորը պետք է կքանստեն, ձեռքերի ափերով ամուր հենվեն հատակին՝ *պաշտպանվելով քամուց:* Հրահանգելու հետ մեկտեղ ուսուցիչն ինքն էլ է երեխաների հետ կատարում պայմանավորված շարժումները: Սակայն երբեմն նա տալիս է մի հրահանգ, բայց ցուցադրում՝ մյուսը: Երեխաները պետք է ուշադիր լինեն և կատարեն ոչ թե ցուցադրվող, այլ տրված հրահանգին համապատասխան շարժումը:

Շարժախաղի կանոնները

1. Երեխաները պետք է ուշադիր նայեն ուսուցչին:
2. Երեխաները պետք է կատարեն ուսուցչի հրահանգին համապատասխան շարժումը:
3. Երեխաները պետք է միաժամանակ կատարեն համապատասխան շարժումները:
4. Այն երեխան, ով սխալվում է, դուրս է գալիս խաղից կամ պարտավոր է կատարել խմբի որևէ ցանկություն-առաջադրանք:

Տեղատարափ

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *դրսևորի բնության ձայներին ուշադրություն դարձնելու, ունկնդրելու կարողություն,*
- *ցուցաբերի բնության երևույթները, մասնավորապես անձրևը, ձայնով ճանաչելու և տարբերակելու կարողություն,*

- *ցուցաբերի ուշադրության կենտրոնացում և արագ գործելու կարողություն ըստ հրահանգի:*

Շարժախաղի ընթացքը

Երեխաները շրջան են կազմում: Շրջանի մեջտեղում կանգնում է ուսուցիչը՝ խաղավարը: Մասնակիցները համակ ուշադրությամբ հետևում են ուսուցչին, սպասում նրա առաջին քայլին: Տիրում է լռություն:

Քայլ առաջին: Խաղավարը ձեռքերի երկու մատներով ճտճտացնում է՝ ստեղծելով *նոր սկսվող անձրևի կտկտոցի տպավորություն:* Միաժամանակ նա սկսում է հերթով նայել երեխաներին: Երեխան, որին հանդիպում է նրա հայացքը, կրկնում է ուսուցչի շարժումը: Այդպես խմբի բոլոր մասնակիցները կատարում են նույն շարժումը և առաջանում է նոր սկսվող անձրևի ձայն՝ կտկտոց *(անձրևը սկսվեց):*

Քայլ երկրորդ: Խաղավարը փոխում է շարժումը: Նա սկսում է շփել ձեռքերի ափերը՝ *ստեղծելով անձրևի սվսվոց, խշշոց*: Այդ շարժումը ևս նախորդ սկզբունքով նա փոխանցում է ողջ խմբին:

Քայլ երրորդ: Խաղավարը ծափ է տալիս, խումբը հետևում է նրան (*անձրևն արագանում է):*

Քայլ չորրորդ: Խաղավարը երկու ձեռքով հարվածում է իր ազդրերին՝ չդադարելով հայացքով շարժումը փոխանցել խմբի բոլոր մասնակիցներին (*անձրևը սաստկանում է):*

Քայլ հինգերորդ: Խաղավարը ոտքերով դոփում է հատակին, խումբը հետևում է նրան (*սկսվում է տեղատարափ):*

Անձրևը դադարեցնելու համար ուսուցիչը կատարում է նույն գործողությունները հակառակ հերթականությամբ:

Շարժախաղի կանոնները

1. Մասնակիցները պետք է ուշադիր նայեն խաղավարին:
2. Խաղավարը փոխում է շարժումն այն ժամանակ, երբ այն կատարում են բոլոր երեխաները:
3. Մասնակիցը փոխում է նախորդ շարժումն այն ժամանակ, երբ ուսուցչի հայացքը հերթական անգամ հանդիպում է նրան: Մինչ այդ նա կատարում է նախորդ շարժումը:

Ջրհեղեղ

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ցուցադրի ջրհեղեղի (կամ սելավի) ժամանակ պաշտպանվելու տարրական գործողություններ,*
- *զարգացնի հիմնական ֆիզիկական շարժումները,*
- *դրսևորի ճարպկություն և արագաշարժություն, համագործակցելու կարողություն:*

Շարժախաղի ընթացքը

Դահլիճում կամ հրապարակում նախօրոք գծվում են խաղացողների թվին համապատասխան շրջաններ (պայմանական բլուրներ, բարձրադիր տեղանքներ): Խաղավարը կամ ընտրված երեխաներից մեկը տալիս է **ջրհեղեղ** (կամ սելավ) հրահանգը: Երեխաներից յուրաքանչյուրն արագ զբաղեցնում է շրջաններից մեկը: Այնուհետև խաղավարը, հերթով մոտենալով յուրաքանչյուր խաղացողին, ցածրաձայն հրահանգ է տալիս՝ ***ջրհեղեղն ավարտվեց***, և շարունակում է ճանապարհը՝ ընթացքում կատարելով որևէ ֆիզիկական վարժություն: «Ջրհեղեղն ավարտվեց» հրահանգը լսած խաղացողը հետևում է խաղավարին՝ կրկնելով նրա կատարած վարժությունները: Խաղավարը, բոլոր խաղացողներին իր շուջը հավաքելուց հետո, հրահանգում է՝ ***ջրհեղեղ (կամ սելավ):*** Հրահանգը լսելուն պես բոլորը, այդ թվում՝ նաև խաղավարը, աշխատում են զբաղեցնել ազատ շրջանները: Դուրս մնացողը ստանձնում է խաղավարի դերը:

Շարժախաղի կանոնները

1. Խաղացողները չեն կարող զբաղեցնել շրջանները, քանի դեռ չի հնչել «*Ջրհեղեղ*» *կամ* «*Սելավ*» հրահանգը:
2. Մեկ շրջանում կանգնելու իրավունք ունի միայն մեկ խաղացող:
3. Հարկավոր է հարգել խաղընկերոջը: Չի թույլատրվում հրել և դուրս հանել նրան շրջանից:

Երկրաշարժ

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *քննարկի և ներկայացնի երկրաշարժի ժամանակ բարձրահարկ շենքում պատսպարվելու, պաշտպանվելու որոշ կանոններ,*
- *դրսևորի դիտունակություն, ճարպկություն, տարածության և ժամանակի մեջ արագ կողմնորոշվելու կարողություն:*

Շարժախաղի ընթացքը

Բոլոր մասնակիցները նստած կամ կանգնած են սենյակի (դասասենյակի) տարբեր մասերում: Խաղավարը՝ ուսուցիչը, ներկայացնում է իրավիճակը. «Դուք գտնվում եք բարձրահարկ շենքի 5-րդ հարկում: Հանկարծ շենքը սկսում է ճոճվել և շարժվել: Գրապահարանից գրքերը վայր են ընկնում, ճոճվում է առաստաղից կախված ջահը: Պատուհանների ապակիները կոտրվում և թափվում են հատակին, պատուհանագոգից վայր է ընկնում ծաղկամանը և ջարդվում, պարունակությունը թափվում է հատակին: Հատակը շարժվում է ոտքերի տակ և կանգնելը կամ նստած մնալը դժվարանում է»:

Խաղավարը հրահանգում է նշված իրավիճակում շտապ կատարել անհրաժեշտ գործողություններ.

Մասնակիցները պետք է 60 վայրկյանից պակաս ժամանակում կատարեն հետևյալ գործողությունները.

- կանգնեն հիմնական պատերի տակ,
- հեռանան պատուհաններից,
- մտնեն ամուր կահույքի տակ,
- ձեռքերով կամ ինչ-որ իրով ծածկեն իրենց գլուխը,
- որևէ բանից ամուր բռնվեն:

Խաղավարը հետևում և գնահատում է մասնակիցների գործողությունները: Պարտվում է այն մասնակիցը, ով նշված ժամանակահատվածում կատարում է ամենաքիչ ճիշտ գործողություններ:

Որոտ, կայծակ, կարկուտ

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- նկարագրի կարկուտի առաջացումը,
- դիպուկ նետի, բռնի և արագ փոխանցի գնդակը,
- դրսևորի ճարպկություն, արագ կողմնորոշվելու կարողություն:

Շարժախաղի ընթացքը

Երեխաները, ուսուցչի հրահանգով, կազմում են շրջան: Ուսուցիչը ներկայացնում է շարժախաղի բովանդակությունն ու կանոնները, ապա ազդարարում է խաղի մեկնարկը:

Ուսուցիչը՝ խաղավարը, վերցնում է 2 տարբեր գույնի գնդակներ, օրինակ՝ կարմիր և կապույտ: Կարմիր գնդակը խորհրդանշում է *որոտ*, կապույտ գնդակը՝ *ամպրոպ, կայծակ:* Խաղավարը կարմիր և կապույտ գնդակները փոխանցում է տարբեր մասնակիցների: Կարմիր գնդակը մասնակիցները *հերթով փոխանցում են* միմյանց՝ փոխանցելիս բացականչելով՝ *որոտ*: Կապույտ գնդակը մասնակիցները իրենց *ընտրությամբ նետում են* որևէ մասնակցի՝ նետելիս բացականչելով՝ *ամպրոպ, կայծակ:*

Մասնակիցների խնդիրն է, որ երկու գնդակները միաժամանակ հայտնվեն մեկ խաղացողի ձեռքում: Երբ «որոտը» և «ամպրոպը» հանդիպում են, տեղում է «կարկուտ», և երեխաները բացականչում են՝ *կարկուտ*:

Այն խաղացողը, ում ձեռքերում միաժամանակ հայտնվում են երկու գնդակները, պարտվում է, և խաղն ավարտվում է: Այնուհետև, խաղավարը ազդարարում է նոր խաղի սկիզբը:

Շարժախաղի կանոնները

1. Կարմիր գնդակը փոխանցում են ըստ հերթականության:
2. Կապույտ գնդակը նետում են ըստ ցանկության:

Հրդեհի մարում

Շարժախաղի նպատակը

Սոíորողը պետք է.

- դրսևորի համագործակցելու և արագ կողմնորոշվելու ունակություններ արտակարգ իրավիճակներում (հրդեհը մարելիս),
- կատարի համաձայնեցված և համակարգված գործողություններ,
- ցուցաբերի արագաշարժություն և զգուշություն:

Շարժախաղի ընթացքը

Երեխաներն ուսուցչի հրահանգով բաժանվում են երկու հավասար խմբերի և շարվում տողանով՝ կազմելով միմյանցից 4-5 քայլ հեռավորության վրա դեմ դիմաց կանգնած երկու շարք: Շարքերում երեխաները պահպանում են իրարից երկու ձեռքերի բացվածքի չափով հեռավորություն:

Շարքերի առջևում կանգնած մասնակիցներին տրվում են ջրով (կամ ավազով) լցված դույլեր: Ուսուցչի՝ խաղավարի հրահանգով շարքերի խաղացողները սկսում են դույլը հաջորդաբար փոխանցել միմյանց: Հաղթում է այն շարքը, որն առաջինն է ավարտում փոխանցումները և որի դույլում ավելի շատ ջուր է մնում:

Շարժախաղի կանոնները

1. Մասնակիցները շարքերում պահպանում են սահմանված հեռավորությունը, չեն խտանում:
2. Փոխանցումները կատարվում են հաջորդաբար:
3. Մասնակիցները դույլը փոխանցում են զգուշությամբ՝ ձգտելով չթափել ջուրը:

Քարե արձաններ

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ցուցադրի արտակարգ իրավիճակներում պաշտպանվելու գործողություններ,*
- *դրսևորի ճարպկություն և արագաշարժություն, ուշադրության կենտրոնացում, տարածության ու ժամանակի մեջ արագ կողմնորոշվելու ունակություն,*
- *դրսևորի համբերատարություն, համագործակցելու կարողություն:*

Շարժախաղի ընթացքը

Խաղավարը ներկայացնում է խաղը, բացատրում խաղի կանոնները, ասում հրահանգները, ցուցադրում գործողությունները:

Հնչում է երաժշտությունը, մասնակիցները շրջան են կազմում և սկսում են շրջանաձև քայլել՝ կատարելով երաժշտությանը համահունչ պարային շարժումներ և պահպանելով միմյանցից մոտ երկու քայլ հեռավորություն: Խաղավարը գտնվում է շրջանի կենտրոնում: Երաժշտությունը դադարում է և խաղավարը տալիս է որոշակի հրահանգ: Մասնակիցները պետք է արագ կատարեն հրահանգին համապատասխան գործողությունները, ընդունեն որոշակի դիրք և անշարժանան այնքան ժամանակ, քանի դեռ չի հնչել երաժշտությունը: Հնչում է երաժշտությունը, մասնակիցները նորից քայլում են շրջանաձև: Այն մասնակիցը կամ զույգը, ով սխալվում է կամ չի հասցնում արագ համապատասխան դիրք ընդունել, դուրս է գալիս շրջանից: Հաղթում են նրանք, ովքեր խաղի ավարտին մնում են շրջանում:

Հրահանգներ.

- *Հրդեհ-ծուխ* - Մասնակիցները ձեռքով արագ փակում են շնչուղիներն ու կռանում:
- *Քամի* - Մասնակիցներն արագ շրջվում են, կանգնում դեմ դիմաց, բարձրացնում ձեռքերն ու ընկերոջ հետ ձեռքերը միացնելով՝ «տանիք» կառուցում:

- *Մելավ* - Մասնակիցները տեղում մեկ ցատկ են կատարում և անշարժանում՝ պահպանելով շրջանը:
- *Երկրաշարժ* - Մասնակիցները ծնկի են իջնում և արագ ծածկում գլուխը:

Շարժախաղի կանոնները

1. Խաղի ժամանակ մասնակիցները լուռ են: Խոսելու իրավունք ունի միայն խաղավարը, ով տալիս է հրահանգներ:
2. Մասնակիցները գործողությունը կատարելուց հետո համապատասխան դիրքում անշարժանում են:
3. Ամեն անգամ հնչող երաժշտությունը շրջանաձև քայլելու հրահանգ է նշանակում:
4. Մասնակիցները չեն խախտում շրջանը:
5. Խաղավարը խաղն աստիճանաբար արագացնում է՝ կրճատելով հրահանգների միջև ընկած ժամանակահատվածը:

Արտակարգ իրավիճակներ

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *ցուցադրի արտակարգ իրավիճակներում պաշտպանվելու որոշ գործողություններ,*
- *դրսևորի արագ կողմնորոշվելու, իրավիճակը գնահատելու և որոշումներ ընդունելու կարողություններ:*

Շարժախաղի ընթացքը

Մասնակիցները բաժանվում են երկու մրցակից խմբի: Խաղավարը՝ ուսուցիչը, խմբերին հաջորդաբար ներկայացնում է տարբեր արտակարգ իրավիճակներ: Խմբերը պետք է շատ արագ, իրավիճակին համապատասխան, վտանգից խուսափելու գործողություն կատարեն (ցուցադրեն): Այն ժամանակ, երբ մի խմբի որևէ անդամը ցուցադրում է գործողությունը, մյուս խումբն ուշադիր հետևում, ապա խաղավարի հետ միասին քննարկում և գնահատում է կատարողի գործողությունները: Հաղթում է այն խումբը, որի անդամները անսխալ են կատարում անհրաժեշտ գործողությունները կամ նվազագույն քանակով սխալներ են թույլ տալիս:

Արտակարգ իրավիճակների (ԱԻ) և համապատասխան գործողությունների (ՀԳ) օրինակներ

1. ԱԻ - Դուք գտնվում եք բնակարանում, որտեղից գազի հոտ է գալիս:
   ՀԳ - *Անհապաղ անջատել գազի փականը, բացել պատուհանները:*
2. ԱԻ - Ուղիղ ձեր առջև պատուհանի ջարդած ապակիներ են թափվում:
   ՀԳ - *Արագ վազել թափված ապակիներից հեռու:*
3. ԱԻ - Ձեր կողքին ուժեղ պայթյուն եղավ:
   ՀԳ - *Երկու ձեռքով փակել ականջները:*
4. ԱԻ - Ձեր ձեռքին տաք բաժակ է:
   ՀԳ - *Ձգալով բաժակի տաքությունը՝ այն արագ դնել մի կողմ:*
5. ԱԻ - Ներս եք մտել սենյակ, որտեղ ինչ-որ մեկն ուշագնաց ընկած է հատակին:
   ՀԳ - *Ապահովել իր և տուժածի անվտանգությունը (արագ ուսումնասիրել սենյակը՝ էլեկտրական հոսանքի, գազի կամ վտանգավոր քիմիական նյութերի ազդեցությունը բացառելու համար), ապա ցուցաբերել առաջին օգնություն, ահազանգել 911:*
6. ԱԻ - Ձեր սենյակի ջահը ճոճվում է և ուր որ է վայր կընկնի:
   ՀԳ - *Շտապ հեռանալ ջահի մոտակա տարածքից, հոսանքազրկել սենյակը:*

Շարժախաղի կանոնները

1. Ամեն անգամ գործողությունը ցուցադրում է խմբի մեկ մասնակից, այդ ընթացքում մյուսները լուռ հետևում են:
2. Խաղավարը հետևում է, որ մրցակից խմբերին տրվեն համարժեք, հավասար քանակությամբ գործողություններ պահանջող իրավիճակներ:

Ցատկ ձորակի վրայով

Շարժախաղի նպատակը

Սովորողը պետք է.

- *զարգացնի ցատկի տեխնիկան,*
- *դրսևորի արագ կողմնորոշվելու ունակություն:*

Շարժախաղի ընթացքը

Հրապարակի, դահլիճի կենտրոնում գծվում է մոտավորապես 1.5 մետր լայնությամբ մի միջանցք՝ *ձորակ*: Միջանցքի աջ և ձախ կողմերում՝ 10-15 մետր հեռավորության վրա, նշվում են սահմանագծեր: Մասնակիցներից երկուսն ընտրվում են խաղավարներ: Նրանք կանգնում են միջանցքում, իսկ մյուս խաղացողները շարվում են սահմանագծերի վրա: Խաղացողներն ազդանշանով վազում են, ցատկով անցնում միջանցքը և կանգնում հանդիպակաց սահմանագծի վրա: Միջանցքի վրայից ցատկելու պահին խաղավարները աշխատում են բռնել նրանց: Բռնվող խաղացողներին մտապահում են և թույլ տալիս շարունակել խաղը: Խաղավարները պարբերաբար փոխվում են և խաղը վերսկսվում է:

Հաղթում է այն խաղավարը, ով առավել շատ խաղացող է բռնել, և այն խաղացողը, ով ավելի քիչ է բռնվել:

Շարժախաղի կանոնները

1. Խաղացողին ձորակից դուրս չի թույլատրվում բռնել:
2. Խաղացողներին միջանցքի վրայից ցատկելու համար տրվում է երեք վայրկյան, ոչ ավելի:
3. Միջանցքով վազքով անցնել չի թույլատրվում: Յուրաքանչյուր հաջորդ խաղացող կարող է վազել ու ցատկել ձորակի վրայով միայն նախորդ խաղացողի՝ սահմանագծին հասնելուց հետո:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[7]

1. Կալաջյան Ե. Մ., Վարոյան Ա. Ա. «Դպրոցական շարժախաղեր». Մեթոդական ցուցáումներ ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողների համար, Երևան 2005:
2. Հովաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս. «Համագործակցային ուսուցում». Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, Անտարես 2006:
3. Մաթևոսյան Հ., Դիլբարյան Թ., Ալավերդյան Ռ., Առնաուդյան Ա., Խաչատրյան Հ., Հովհաննիսյան Ս. Աղետների ռիսկերի նվազեցման կրթություն. Ձեռնարկ նախադպրոցական կրթական հաստատությունների և դպրոցների ուսուցիչների համար, Երևան, Փրինթինֆո 2011:
4. «Методология и инструментарий оценки безопасности школ и дошкольных образовательных учреждений Кыргызстана» ЮНИСЕФ, 2012
5. M. Ratiani, N. Labatkava, A. Kitiashvili, P. Sadunishvili, E. Tserteli, N. Gvetadze. (2012). *Teaching disaster risk reduction with interactive methods. Head teacher's guide.* Tbilisi. (2012)

7 Նյութերի մշակմանն աջակցել են «Հայաստանում ԱՌՆ կրթություն» ծրագրի մասնակից նախադպրոցական կրթական հաստատությունների և դպրոցների մանկավարժները:

- Աշտարակի թիվ 1 դպրոց, Արագածոտն,
- Ծաղկահովիտի թիվ 1 դպրոց, Արագածոտն
- Օշականի «Գայանե» մանկապարտեզ, Արագածոտն,
- Գյումրիի թիվ 7 դպրոց, Շիրակ
- Ախուրյանի թիվ 1 դպրոց, Շիրակ
- Մարալիկի մանկապարտեզ, Շիրակ
- Գեղահովիտի 2-րդ դպրոց, Գեղարքունիք
- Սևանի «Հեքիաթ» մանկապարտեզ, Գեղարքունիք
- Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 դպրոց, Վայոց Ձոր
- Ծատինի միջնակարգ դպրոց, Վայոց Ձոր
- Մալիշկա մանկապարտեզ, Վայոց Ձոր

ԱՌՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Ասացվածքներ, առածներ, ասույթներ, դարձվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ

Ուսումնական այս նյութը կարելի է օգտագործել տարաբնույթ խոսքային դիդակտիկական խաղեր կազմակերպելու համար: Այս պարապմունքներն ու խաղերը կարելի է կիրառել տարբեր դասարաններում՝ ընտրելով և օգտագործելով երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան և նրանց ընկալմանն առավել հասկանալի ասացվածքներ, առածներ, ասույթներ, դարձվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ և այլն:

ՀՐԴԵՀ



- Կրակը լավ ծառա է, բայց վատ տեր:
- Կրակի հետ մի՛ խաղա:
- Կրակի լեզուն ամենաերկարն է:
- Եթե քո հարևանի տունն այրվում է, աղետը քեզ էլ է սպառնում:
- Փոքրիկ կայծը հսկա բոց կծնի:
- Քանի մոխիր է, հենց այդ ժամանակ էլ մարիր:
- Ծուխը ծառից էլ բարձր է աճում:
- Ծուխը ձեռքով չես բռնի:
- Ծուխը բոցի ծերությունն է:
- Կրակը բամբակի մեջ չես պահի:
- Մի կայծից մի ամբողջ փողոց կայրվի:
- Մոտիկ ծուխը աչք է կուրացնում:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

- Ախր մարդը
- Ո՞նց չգիտի՝
- Երկրաշարժը
- Առանց հեղեղ,
- Առանց հրդեհ,
- Առանց սողանք,
- Կամ էլ ուրիշ

- Մի հետևանք,
- Ո՞նց կլինի:
- Քաղաքները ստեղծվել են դարերով, իսկ ոչնչացվել են մի քանի ժամում:
- Ավազի վրա տուն շինել:
- Առանց ամուր հիմքի, շենքն արագ քանդվում է:
- Ավազի վրա տուն մի՛ կառուցիր:
- Խարխուլ շենքին երկրաշարժ հարկավոր չէ, որպեսզի փլվի:
- Տունն ավերելը ավելի հեշտ է, քան այն կառուցելը:

ՍԵԼԱՎ

- Անձրևը գալիս է քամու կանչով:
- Փոքր առվակները հոսում են նույն զառիվայրով, ինչ որ մեծ գետերը:
- Ջուրն իր ճամփան կգտնի:
- Կաթիլը քար է ծակում:
- Ջրի բերածը ջուրն էլ կտանի:
- Անձրևի ծեծածը կարկուտն էլ կծեծի:
- Անձրևից փախավ, հեղեղի տակ ընկավ:
- Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա:
- Ելած սիրտը, վարար գետը մեկ է:

ՔԱՄԻՆԵՐ

- Անձրևը գալիս է քամու կանչով:
- Քամու խերն էլ շատ է, շառն էլ:
- Քամին փչի՝ անտառը խշշա:
- Քամին քարից բան չի տանի:
- Քամիներն այնպես չեն փչում, ինչպես պետք է նավերին:
- Ջրի բերածը քամին կտանի:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

- Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:
- Գյուղ կանգնի, գերան կկոտրի:
- Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:

- Ձեռքը ձեռք կլվանա, երկու ձեռքը՝ երես:
- Ծառն ամուր է արմատներով, իսկ մարդը՝ բարեկամներով:
- Լավ կանես՝ քեզ կանես, վատ կանես՝ քեզ կանես:
- Ծառը գանգատ գնաց աստծու մոտ կացնից, որ իրեն կտրում է, ասեց՝ կոթը քեզանից է:
- Ամեն անգամ գետը գերան չի բերի:
- Լավ է կույր լինես աչքով, քան՝ մտքով:
- Մարդու քաշածն իր խելքից է:
- Մարդ չպետք է որևէ գործ սկսի՝ առանց նախօրոք մտածելու, թե ինչով կվերջանա:
- Չիմանալը մեծ վտանգ է, ինքը տեղով հենց փորձանք է:
- Ի՞նչ է մնում, որ մարդ անի՝ *Ապրած տունը լավ ճանաչի:*
- Աստված փրկում է նրան, ով ցանկանում է փրկվել, Աստված պահպանում է իրազեկին, պատրաստվածին:
- Իմանալ, որպեսզի կանխատեսել, կանխատեսել, որպեսզի գործել:
- Դու միշտ կարող ես փրկել քո և ուրիշների կյանքը, եթե իրազեկ ես ու նախապատրաստված:
- Եթե գիտեք՝ ինչ պետք է անել աղետների ժամանակ, դուք կարող եք կյանքեր փրկել:
- Մարդ վախենում է միայն նրանից, ինչ չգիտի. գիտելիքով է հաղթահարվում ցանկացած վախը:
- Մարդկային ամբողջ դժբախտությունը անգիտության կամ տգիտության հետևանք է:
- Բնությունը կատակներ չի ճանաչում, այն միշտ ճիշտ է, միշտ լուրջ, միշտ խիստ է. սխալներն ու թյուրիմացությունները գալիս են մարդուց:
- Մի անգամ քեզ ծառ զգա՝ կացինդ սրելուց առաջ:
- Ամեն փորձանք մի խրատ է, ոչ փորձանքը կվերջանա, ոչ խրատը:
- Կանխելն ավելի հեշտ է և 15-20 անգամ ավելի էժան, քան հետևանքները վերացնելը

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Երբ մենք սահում ենք բարակ սառույցի վրայով, մեր փրկությունն արագությունն է:
- Դժվարինն այն է, ինչը հնարավոր է անել անմիջապես: Անհնարինն այն է, ինչը կպահանջի քիչ ավելի ժամանակ:

- Խուճապը կարող է ավելի մեծ ավերածություններ պատճառել, քան բուն աղետը:
- Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակ կարող է հանգեցնել խուճապի, յուրաքանչյուր խուճապ կարող է հանգեցնել արտակարգ իրավիճակի:
- Այս կյանքում միայն նա կարող է հաղթել, ով կհաղթահարի իր վախը, ալարկոտությունն ու անվստահությունը:
- Զգուշավորությունը երբեք ավելորդ չի լինում:
- Նա, ով գիտելիքներ է ձեռք բերում, բայց չի կիրառում դրանք, նման է նրան, ով վարում է, բայց չի ցանում:
- Արտակարգ իրավիճակներում լրատվությունը նման է սննդի. այն պետք է տրվի ժամանակին և անհրաժեշտ չափաբաժնով:
- Տիրապետում ես տեղեկատվությանը, տիրապետում ես իրավիճակին:
- Արտակարգ իրավիճակների կառավարման հիմնաքարը ճշգրիտ լրատվությունն է:
- Տեղեկատվության վերջն աշխարհի վերջն է:
- Լավ անես՝ քեզ կանես, վատ կանես՝ քեզ կանես:
- Փորձանքը գալուց առաջ լուր չի ուղարկում. ուրեմն հարկավոր է պատրաստ լինել միշտ:
- Ծառայություն 911, հարյուր փորձանք, պատասխան՝ մեկ:
- Խուճապի մի մատնվիր, 911 զանգահարիր:
- Իմանալ, որպեսզի կանխատեսել, կանխատեսել, որպեսզի գործել:

ԱՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

- Գյուղ կանգնի, գերան կկոտրի:
- Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:
- Լավ ընկերը նեղության ժամանակ է երևում:
- Միասնությունը ուժ է:
- Անմիաբանությունը ընտանիք է քայքայում:
- Տունն ավերելը ավելի հեշտ է, քան այն կառուցելը:
- Անոթը ջարդելը հեշտ է, քան նորոգելը:
- Փորձության ենթարկվածն է զգուշանում:
- Ինչ որ ցանես, այն կհնձես:
- Ամեն բանի վերջն է գովելի:
- Գործը վաղվան մնաց, իմացիր կորավ գնաց:

- Աստծուց խնդրիր, բայց բահը ձեռքիցդ մի գցիր:
- Լավ կանես՝ քեզ կանես, վատ կանես՝ քեզ կանես:
- Երբ կկտրվի վերջին ծառը, երբ կթունավորվի վերջին գետը, երբ կսպանվի վերջին թռչունը, այդժամ Դուք կհասկանաք, որ փողը հնարավոր չէ ուտել:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Կանչեցին ու սպասեցին,
Եկավ թե չէ, թաքնվեցին:
(անձրև)

Ամպը ամպին ոսոխ դառավ,
Ասես իրե լեզու առավ,
Երբ յոթ գույնով փայլատակեց՝
Կյանքը մեկեն հրաշք դառավ:
(ծիածան)

Անձեռ, անոտ սուրում է,
Անգետ-անգետ սուլում է,
Երբ փնտրածը չի գտնում,
Ձեռքը պարզած մուրում է:
(քամի)

Ձեռքեր չունի, ոտքեր չունի,
Վազվզում է, ոռնում, հեծում,
Փոշեկոլոլ մտնում է բակ,
Դուռ ու պատուհաններ ծեծում:
(քամի)

Փայլուն աղեղ երկնքում,
Որ գոռում է ու շաչում,
Ձգույշ, հանկարծ կիջնի ցած
Ու կտա այրող հարված:
(կայծակ)

Փայլփլեց հրեղեն մի նետ,
Ու չեն բռնում նրան երբեք
Ոչ գոռ արքան,
Ոչ թագուհին,
Ոչ էլ չքնաղ գեղեցկուհին:
(կայծակ)

Երկնքից իջավ թափով ահեղ,
Քարափներում դարձավ զորեղ,
Քշեց՝ ճամփին ինչ պատահեց,
Եկեք նրան ասենք…
(հեղեղ)

Վեր ելանք լեռը,
Թափվեց սիսեռը:
(կարկուտ)

Կլոր է՝ գնդակ չէ,
Սպիտակ է՝ բամբակ չէ:
(կարկուտ)

Մեկը դոփում է երկնքում,
Ներքևում աշխարհն է տնքում:
(ամպրոպ)

Ճերմակ-ճերմակ թիթեռներ
Իրենց թևերն են բացել,
Ու ճախրում են, թռվռում
Քանի գետին չեն հասել:
(ձյան փաթիլներ)

Ծածուկ-ծածուկ ով է գալիս,
Ոտքեր չունի՝ ման է գալիս,
Աչքեր չունի՝ լույս է տալիս,
Բերան չունի՝ կուլ է տալիս:
(ձյուն)

Գալիս է նա՝ ոտքեր չունի,
Պառկում է՝ անկողին չունի,
Թեթև է, բայց ով իմանա՝
Ծառ ու տանիք կդիմանա՞ն:
(ձյուն)

Իջնում է, նստում է, թառում,
Այգում, հանդում ու սարում,
Նրա մահով ուռճանում,
Հզորանում է առուն:
(ձյուն)

Թեև փոքր է մոծակից,
Սակայն ժայռեր կծակի:
(ջրի կաթիլ)

Առաջ գալիս, հետ է գնում,
Քար ու ավազ է ողողում,
Երբ որ թույլ է՝ մեղմ ծփում է,
Ուժեղ եղավ՝ խորտակում է:
(ալիք)

Երկրի ընդերքում
Ուժ է հավաքում,
Գոռում է, ցնցում,
Քանդում, ավերում:
(երկրաշարժ)

Դաշտ ու լեռ է այն ցնցում,
Կրակ, մոխիր է ժայթքում,
Հսկա մի սար է դառնում:
(հրաբուխ)

ԱՈՒՆ կրթության տարրերով դասերի դիտարկման և վերլուծության թերթիկ

Դասի բաղադրիչներն	Բովանդակություն	Նշումներ
նպատակ	• նպատակի ձևակերպումը **չափորոշչային պահանջներին** համապատասխան • նպատակների ձևակերպման պահանջների պահպանում (հստակ, իրատեսական, գործողություն ցույց տվող, սովորողի տեսանկյունից՝ վերջնարդյունքի ձևով և այլն...) • նպատակում ԱՈՒՆ կրթությանն առնչվող բաղադրիչի առկայություն • նպատակի և ուսումնական գործողությունների համապատասխանություն, համընկնում • դասի ընթացքում չիրականացված որևէ նպատակի իրականացման հետագա հնարավորություններ	
Գնահատում	• գնահատման ապահովում • գնահատման գործիքների կիրառում • գնահատման չափանիշներում ԱՈՒՆ կրթությանն առնչվող պահանջի ընդգրկում • գնահատման առնչությամբ ուսումնառության նյութերի առկայություն • գնահատման համապատասխանություն դասի նպատակին ու մեթոդներին • գնահատման տարբեր ձևերի ու եղանակների կիրառում • սովորողների անձի և գործունեության տարբեր ոլորտների գնահատում	
Մեթոդներ	• մեթոդների ընտրության համապատասխանություն դասի նպատակին, գնահատման ձևին, բովանդակությանը, դասի փուլերին • դասի կառուցվածքում համապատասխան մեթոդների ընտրություն • մեթոդների համար ժամանակի ճիշտ նախատեսում • կիրառված մեթոդների հաջող զուգակցում	

Դասի բաղադրիչներն	Բովանդակություն	Նշումներ
Աշխուժացնող վարժություններ	• աշխուժացնող վարժությունների, վարժանքների առկայություն, այդ թվում՝ ԱՌՆ կրթությանն առնչվող • աշխուժացնող վարժությունների ընտրության համապատասխանություն դասի նպատակին, բովանդակությանը, մեթոդներին • աշխուժացնող վարժությունների տեղի որոշում, նրանց համար ժամանակի նախատեսում	
Հարցեր, հրահանգներ, առաջադրանքներ	• հարցեր, հրահանգներ, առաջադրանքներ, որոնք վերաբերվում են աղետների ռիսկի նվազեցմանը՝ կանխարգելում, պաշտպանություն, հետևանքների վերացում • տարբեր առաջադրանքների և ուսումնական գործունեության տեսակների կիրառում, • ուսումնական գործունեության և առաջադրանքների համապատասխանությունը չափորոշչային պահանջներին և դասի նպատակին *Հարցերն ու հրահանգները պետք է՝* • ձևակերպվեն պարզ և հասկանալի • լինեն հստակ (մտքի և ձևակերպման առումով) և հակիրճ • ուղղված լինեն մեկ խնդրի կամ մեկ գաղափարի • ամեն անգամ միայն մեկ հարց • համապատասխանեն սովորողի զարգացման մակարդակին • ունենան տրամաբանական հաջորդականություն (հարցը պետք է բխի նյութի տրամաբանական հաջորդականությունից) • խթանեն մտածողությունը • սկսվեն համապատասխան հարցական բառից՝ ինչու՞, ինչպե՞ս, ի՞նչ… • հարցը ուղղել բոլորին, ստանալ անհատական (կամ խմբային) պատասխան • տրվի ժամանակ՝ մտածելու և պատասխանելու համար	

Դասի բաղադրիչներն	Բովանդակություն	Նշումներ
Ժամանակ	• դասի պլանում ժամանակի գործոնի հաշվառում • նախատեսված ժամանակի և դասի նպատակների ու խնդիրների համընկնում • դասապրոցեսի այս կամ այն գործողության համար նախատեսված ժամանակի իրատեսական լինելը • նախատեսված ժամանակի և դասապրոցեսում օգտագործված ժամանակի համընկնում • տվյալ գործողության համար նախատեսված ժամանակի նախապես հրահանգավորում • նախատեսված և հրահանգավորված ժամանակի պահպանում • նախատեսված ժամանակից չնախատեսված շեղումների հիմնավորում • ժամանակի պահպանման և կարգավորման ուղղությամբ մեթոդական հնարքների կիրառում	
Դասավանդման և ուսումնառության նյութեր	• դասի պլանի, դասավանդման և ուսումնառության նյութերի (այդ թվում նաև ԱՌՆ կրթության վերաբերյալ) առկայություն • դրանց համապատասխանությունը թեմային և բովանդակությանը, դասի նպատակին, կիրառման նպատակահարմարությունը դասավանդման և ուսումնառության նյութերին ներկայացվող պահանջների (դիդակտիկական, հոգեբանական, հիգիենիկ, գեղագիտական) ապահովում	

Դասի բաղադրիչներն	Բովանդակություն	Նշումներ
Սովորողների ակտիվությունը, ագործակցությունը	• դասապրոցեսի կազմակերպման տարբեր ձևերի (անհատական, զույգերով, խմբային աշխատանք ողջ դասարանով) կիրառում • անհատական, զույգերով, խմբային աշխատանքների կազմակերպման համար մեթոդների և հնարների կիրառում • սովորողների ակտիվության խրախուսում, խթանում և գնահատում • համագործակցային աշխատանքի բաղադրիչների ապահովում սովորողների համագործակցային աշխատանքի հմտությունների խրախուսում և կարևորում աղետների ռիսկի կանխարգելման, պաշտպանության և հետևանքների հաղթահարման գործում	
Ռեֆլեքսիա	• քննարկված թեմաների, հարցերի ու գաղափարների ամփոփում սովորողների կողմից • սովորողների կողմից ուսումնական գործունեության վերլուծություն, սեփական գործողությունների հետահայաց վերլուծություն	

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԽԱՂԵՐ

Խորհուրդատուներ՝ ՍԻՐՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԹԵՐԵԶԱ ԴԻԼԲԱՐՅԱՆ
Խմբագիրներ՝ ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՈՍՅԱՆ, ԱՐԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ձևավորողներ՝ ՎԱՀԱԳՆ ՍԱՐԳՍՅԱՆ, ՎԱՀԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

HEGHINE KHACHATRYAN

DISASTER RISK REDUCTION EDUCATION

LESSON PLANS AND GAMES

Advisors: SIRUSH HOVHANNISYAN, TEREZA DILBARYAN
Editors: HAMLET MATEVOSYAN, ARA BARSEGHYAN, TIGRAN TOVMASYAN
Designers: VAHAGN SARGSYAN, VAHAN ALAVERDYAN

Սույն ձեռնարկը մշակվել և տպագրվել է Եվրամիության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված «Աջակցություն Հարավային Կովկասի խոցելի համայնքներում և հաստատություններում աղետների ռիսկի նվազեցմանը» ծրագրի շրջանակներում: Ձեռնարկում արտահայտված կարծիքները հեղինակային են և որևէ ձևով չեն արտահայտում Եվրամիության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեսակետները:

This publication has been produced within the framework of "Support Disaster Risk Reduction amongst Vulnerable Communities and Institutions in Southern Caucasus project" funded by the European Union and implemented by the United Nations Children's Fund (UNICEF). are the sole responsibility of the authors and can in no way be taken to reflect the views of the European Union and UNICEF

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2013